



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



2423

բարոյակալ


պատմութիւն

տեմբակ - Ա

891.99 5  
A-36

Թիֆլիս

1860







3 22 4

13

557

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՐ

ՍՇԻԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԳԻՄՆԱԶԻԱՅԻՆ ԹԻՖԼԻԶՈՅ .

ՆՈՒԲԵԱԼ

ԱՅԺՄԵԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՄԱՆԿԱՆՅ :

ՏԵՏԻԱԿ - Ա

1860

ԹԻՖԼԻԶ

ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ

891.995  
F-36

ԳԱՐԲԻԷԼԻ ՄԵԼԻՔՈՒՄԵԱՆՅ ԵՒ ՀԱՄԲԱՐԶՈՒՄԱՅ

ԷՆՁԻՍՏԵԱՆՅ :

Handwritten text in a cursive script, possibly a name or title.

Handwritten text in a cursive script, possibly a name or title.

8 391.994  
F-36

u

# ԲՍՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻ

300  
1444-ԲԱ

ԵՐԵՎԱՅԻՑ ՀԱՄԱՐ



ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԳԻՄՆԱԶԻԱՅԻՆ ԹԻՖԼԻԶՈՅ .

1003  
14480

q

ՆՈՒԻՐԵԱԼ

ԱՅՖՄԵԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ :

ՏԵՏԲԱԿ - Ա



1860

ԹԻՖԼԻԶ

Ի ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ ԳԱՐԲԻԷԼԻ ՄԵԼԳՈՒՄԵԱՆՑ

ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՅ ԷՆՖԻՍՃԵԱՆՑ :



000  
1859

2004

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ :**

съ тѣмъ , чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ . Тифлисъ . Ноября 10 го дня 1859 года .

*Ценсоръ П . Кайтмазовъ .*

ԱՌ ՀԱՅԿԱԶՆ ՄԱՆԿՈՒՆՍ :

Հայոց որդիք , զևու երեխայք  
Մեր սիրելի կրտսեր եղբայրք ,  
Ահա մենք ձեզ ենք ընծայում  
Մեր առաջին աշխատութիւնն :

Աշխատեցէք ամէն օր , միշտ  
Լուսաւորել ձեր միտք և սիրտ .  
Սոցա նման պատմութիւններ  
Կարդացէք զուք ցերեկ , դիշեր :

Աղէքսանդրերն՝ ձեզ հայելի ,  
Միքայելներն՝ հրաժարելի .  
Լաւը կարդաք՝ ձեզ յաւացրէք  
Վասն էլ կարդաք՝ նմանապէս :

Ձեր վարքն ու բարքն զեղեցկացրէք ,  
Զմիտաց զխտութեամբք զարդարեցէք .  
Գուք որ լինիք փառքով , պատուով ,  
Ծեր Մասիան էլ կհմոզաց ձեզնով :

Սիրելիներ լաւ խնացէք  
Ազգի միակ յոյսը զուք էք ,  
Գուք էք մնացել Հայութեան նշան  
Եւ յիշատակ ձեր Հարց արեան :

Քիչ զխտութեամբ մեր սուրբ նախնիքն ,  
Ո՛րքան բարի արին ազգին .

Ար շատ սովորիս , շատ դիտենաս ,  
Գիտես քանի պարտք կունենաս :

Չկենից Մասիան էս է խնդրում ,  
Երեկ , այսօր , յամէն ժամուն .  
“ Զպարծանա Հայոց պահպանեցէք ,  
“ Աղղի ընտիր անդամ եղէք :

Իբերանոյ Գէորգայ Տ. Աղէքսանդրեանց :

Գէորգայ Բարեւան :

Սմբատոյ Կարենեան :

Աղէքսանդրի Երիցեան :

Միքայելի Քոչարեան :

Զաքարիայի Գրիգորեան :

Սարգսի Եղիպարեան :

և Գէորգայ Ներսիսեան :

Ահա որքան նշանակութիւն ունի ուսումնա-  
սիրութիւնը և ինչպէս փաստակար է  
ծուլութիւնը :



Մի քայելը և Աղէքսանդրը մէկ հարուստ հօր որ-  
դիք էին, նրանց երկուսի վարքն ու բարքը միմեան-  
ցից շատ զանազան էին : Մի քայելը՝ մեծ որդին շատ  
ծոյլ էր, սիրում էր ժամանակը անց կացնել պարտադու-  
թեան, խաղ անելու և ծառաների հետ դատարկ խօսակ-  
ցութեան մէջ, որոնք շատ անգամ ասում էին նրան .  
« պարտն, ինչ հարկաւոր է քեզ շատ բան սովբել և էդ-  
պէս ցաւացնել քո զլուխդ . թող խեղճերը և աղքատ-  
ները աշխատեն, որովհետև իւրեանց հօրից մէկ օգ-  
նութեան չեն սպասում նրանք . բայց քո հայրը ամէն  
բան ունի լիութեամբ, քու հօր հարստութիւնները .  
ունենալով, առանց ուսման էլ կարող ես երևելի առ-  
տիճանաւոր դառնալ » : Այսպիսի յիմար յիմար խօս-  
քերը մեր Մի քայելին աւելի էին դուր դալի և աւելի  
սիրով և յօժարութեամբ էր նա լսում, քան թէ իւր  
պատուական վարժապետների օգտակար խրատները :  
Որովհետև հայրը մեծ կարողութեան տէր էր, էնդուր  
էլ ոչ մէկ բան չէր խնայում իւր որդիերանց ուսում  
տալու համար . որտեղ լաւ լաւ վարժապետներ էր տես-  
նում, տանում էր իւր զաւակաց համար : Բայց Մի-  
քայելը բոլորովին սէր չունէր սորվելոյ . ուսումը նրան

Թուում էր մէկ ծանր և դառը բռն , այնպէս որ կար  
դալու ժամանակը անդադար մտիկ էր տալի ժամացու-  
ցին անհամբերութեամբ , թէ երբ կլինի մէկ շուտով  
վերջանայ այս առեղի դործը : Վարժապետները շատ  
անգամ բարկանում էին նրան և յանդիմանում էին այս  
խօսքերով , « մի կորցնիր սիրելի որդեակ այդ թան-  
գադին ժամանակը և քո մանկութեան քաղցր օրերը .  
ի դուր ևս դու յոյսդ դնում քոյ հօր հարստութեան վը-  
րայ . շատ անգամ պատահել է , որ մեծ ժառանգու-  
թիւն ստացող բայց անուսումն որդիք ընկել են յե-  
տին աղքատութեան մէջ և անց են կացրել խրեանց  
կեանքը տարաբաղդութեամբ : Սիրելի Միքայէլ հարըս-  
տութեան վրայ չի կարելի հաստատ յոյս դնել . այսօր  
հարուստ ևս , բայց ով դիտէ էդուց ինչ կը պատահի , շատ  
կարելի է ամէնից դուրի մնաս : Էստուր համար ամե-  
նայն երեխայ պէտք է աշխատի իւր կարողութեան  
դեօրս այ մանկութեան օրերում սովորել ամենայն դի-  
տութիւնները և հարկաւոր բաները , որ յետոյ արիւնկրի  
համար ծանրութիւն չը դառնայ , : Միքայէլը բոլորո-  
վին չէր ահանջ դնում այն խնայտուն խրատներին , և  
աւելորդ գլխացաւանք էր համարում վարժապետի խօ-  
սակցութիւնները : Բարի հայրը առաջ ծնողական սիրով  
և բարեկամութեամբ աշխատում էր յորդորել իւր որդ-  
ւոյն , որ թողնի վատ սովորութիւնը , վատ կարծիք-  
ները և սկսի հետևիլ ուսման : Բայց երբ տեսաւ , թէ  
իւր խրատները և յորդորանքները անօգուտ մնալին ,  
էնդուր էլ իւր որդւոյ ուղղելու համար պատիժներ կար-  
գեց : Այս հնարքը փոքր ինչ յաջողեց հօրը : Արբան  
Միքայէլը պատժից վախենալով նստում էր անչարժ ,  
գրէի վրայ մտիկ ապրով . բայց սրտին աւել ընդունում

տրտով չէր ջանկանում բան ստիպել . կարդացածիցը մէկ խօսք չէր հասկանում : Հօր բարկանալու ժամանակը Միքայէլը տրտմութեամբ եւ լալով հաստատում էր թէ « ես ինչ անեմ , որ սուր ընդունակութիւն չունիմ . կարդացածներս որ շուտով մոռանում եմ , իմ մեղքը խօսմ չէ , ես բնութիւնից այսպէս եմ ստեղծած » : Վերջը Միքայէլի աղգականները խորհուրդ տուին նրա հօրը , մէկ որ եւ իցէ ուսումնարան պահ տայ , այն դիտաւորութեամբ , որ շատ կարելի է այն տեղ աշխատասէր երեխանց օրինակը նրա մէջն էլ դարձացնէ . քընած ուշք ու միտքը եւ թմբբած բնութիւնը : Բայց ընդհակառակն Միքայէլը քանի մեծանում էր , այնքան աւելի զգում էր զգում իւր մէջ ուսումից եւ դիտութիւնից . ուսումնարանումը նա մնաց մէկ դասատան մէջ աւրոզջ երեք տարի եւ վերառեւտուչը նրա սաստիկ ծուլութիւնը սեանելով եւ հասկանալով նրա վատ օրինակի չար հետեւանքները , յետ ուղարկեց հօր մօտ : Տարաբարդ հայրը չէր խմանում իւր սրտուն ինչ անի , նրա չար վարքը եւ մանաւանդ սիրելի կնոջ այ մահը մեծ տրտմութիւն գցեցին նրա սրտի մէջ . շատ անգամ նա արտասուք թափելով ասում էր իւր ծուլ սրտուն , « Միքայէլ , որդեակ իմ , ինչ պէտք է անեմ քեզ . հաւատան , սիրելի իմ , քոյ կեանքդ տարաբարդութեան մէջ կանցկացնես միշտ եւ հանապաղ , հաւատան որ կգայ այնպիսի ժամանակ , երբ շատ կցաւիս շատ վնայ կտաս գլխիդ , ստեղծ . » միս ինչի մանկութեան օրերը պարապութեամբ անցկացրի , մէկ օրտակար բան չսովբեցայ այն ժամանակը , բայց քո բոլոր դանդաղները ի դուր կլինին , էլ մէկ օրու չեն ուղքեղ . հաւատան ինձ : »

Աղէքսանդր՝ նրա փոքր որդին բաղրովին ուրիշ հոգի եւ ուրիշ բարի ցանկութիւններ ունէր . նա իւր աշխատասիրութեամբ եւ ուսումնասիրութեամբ մխիթարում էր իւր տրտմած հօր սիրտը : Հարկաւոր չէր ասել նրան թէ « սովորիր , դիրք կարդան » , նա առանց ուրիշի ասելոյ մեծ յօժարութեամբ եւ սիրով պատրաստում էր բոլոր դասերը եւ ուրախացնում էր իւր հօրը յառաջադիմութիւնովը : Ուսումը եւ ամենայն դիտութիւնները սիրում էր նա բոլոր սրտով . այնպէս՝ որ պարապ ժամանակներն էլ օգտակար բաներով էր պարասպում , կարդում էր բարոյական պատմութիւններ , բարի խորասաններ , սրտնցով բացուում էր նրա միտքը եւ լուսաւորում էր նրա սիրտը : Միքայէլը տեսնելով իւր եղբոր աշխատասիրութեամբ դրքերի կարդալը , ասում էր նրան միշտ ծիծաղելով . « Դու բաս մտքումդ դըրել ես , ասան երեւելի ուսումնական դառնալ էլի , եւ ուղում ես մեր ազգը քեզանով պայծառացնել եւ պատուականացնել » : « Չեմ դիտի , սիրելի եղբայր իմ , խոնարհութեամբ պատասխան էր տալի Աղէքսանդրը , ինչ որ Աստուած կը կամենայ , ես էլ էն կը լինեմ , աչդ բանի վրայ չեմ մտածում բոլորովին եւ չեմ մտածի էլ իմ կեանքումը . դրքեր եմ կարդում էնդուր համար , որ նրանցից նոր նոր եւ օգտակար բաներ եմ խմանում եւ սովորում . միշտ աշխատում եմ էնդուր , որ իմ հօրը դուր է գալի այս բանը եւ դովում է նա ինձ աշխատասիրութեանս համար » :

Երբ որ Աղէքսանդրը տասն եւ չորս տարեկան դառաւ ծնողը ուղարկեց նրան համալսարան , աւելի մեծ մեծ դիտութիւններ տրվելու :

Տանը լաւ պատրաստուած լինելով նա քիչ ժամանա-

Կում սիրելի եղաւ ամենայն վարժապետներին եւ շուտով էլ առաջին աշակերտ դառաւ : Վարժապետների խօսելու եւ դովելու առարկայ էր դառել մեր Աղէքսանդրը . նրանք միայն նրանով էին պարծենում ամենայն վերապետաց մօտ : Ուր որ մէկ բան էին հարցնում , Աղէքսանդրը պատասխանում էր ամէնից առաջ . միւս աշակերտները շատ էին նեղանում նրանից , նրանց պատիւը եւ արժանաւորութիւնը համարեան ոչնչացաւ : Էնդուր էլ ծաղր անելու համար եւ Աղէքսանդրի վրայ ծիծաղելու , ընկերները առաջարկում էին նրան այսպիսի հարցմունքներ . « քանի աստղ կայ երկնքումը , քանի աւազի հատիկ կայ ծովի ափումը , եւ ուրիշ սրա նման յիմար յիմար հարցմունքներ : Աղէքսանդրը իւր ընկերների ասելութիւնը տեսնելով , շատ տխրեցաւ . նրա սրտի ամենամեծ ցանկութիւնն էր ամէնքի հետ սիրով , միարժանութեամբ եւ բարեկամութեամբ լինել : Տեսնելով որ ինքն էր շիտից եւ անմիարժանութեան պատճառը , աշխատեց իրան ուղղել եւ իւր պակասութիւնները դրստել : Էնդուր էլ համբերութիւնը կանոն դրեց իրա համար . պատասխան էր տալիս այն հարցմունքների վրայ , որ խկապէս նրան էին առաջարկուում . եթէ ուրիշին էին հարցնում մէկ բան , ինքը սուս էր կենում , եւ միայն այն ժամանակն էր պատասխան տալի , երբ տեսնում էր , որ ամենքը հրաժարուում էին պատասխանելուց : Այսպիսութիւնով խելօք Աղէքսանդրը սակաւ առ սակաւ ընկերներին քաշեց իւր կողմը , ամէնքը սկսեցին սիրել նրան հեղութեան եւ պարկեշտութեան համար :

Մէկ քանի տարուանից յետոյ , երբ Աղէքսանդրը քանի մի ամիս պէտք է մնար համալսարանը , երբ նա

մեծ յոյս ունէր ուսումը լաւ աւարտելոյ , երբ ասում էր թէ “ անն շուտով կերթամ հօրս մօտ եւ կուրախացնեմ նրան իմ գեղեցիկ վկայականով ,” խեղճը տրխուր համբաւներ խնայաւ : Նրա ազգականներինց մէկը նամակում դրել էր , թէ “ քոյ հայրը սաստիկ հիւանդ է եւ շատ քիչ յոյս կայ նրա առողջանալոյ , թէ քոյ հօր հարստութեան մեծ մասը գողացան աւաղակները եւ թէ քոյ եղբայր Միքայէլը դեռ հիմի էլ ծառայութեան մէջ չէ , այլ տանն է առանց գործոց վաղուցուայ պէս պարապութեան մէջ ,” : Նամակի վերջին գրած էր , թէ սիրելի Աղէքսանդր լաւ սովորիր , աշխատէ խելօք մարդ գուրս դալ եւ բոլորովին յոյս մի ունենայ քո հայրական ժառանգութեան վրայ : Այս լուրը շատ տրտմացրուց նրան . անասելի սէր ունենալով իւր հօրը , զկարողացաւ համբերել , աղի աղի սրտասունք թափելով ընկաւ փրկչի պատկերի առջեւը եւ աղաչում կր իւր հօր առողջութեան համար : Տասն օրուանից յետոյ Աղէքսանդրը մէկ շատ դարմանալի եւ անսովոր երազ տեսաւ . իբրեւ թէ նա իւր հօր տանն էր , հայրը կատարեալ առողջ էր եւ գուարթ գէմքով բռնեց նրա ձեռքը եւ ասաց : “ Գու ինձ համար աղաչեցիր Աստուծուն , դու ինձ համար աղօթք արիր սիրելի որդեանկ . Աստուած լսեց քո խնդրուածքը , ես առողջացայ , էլ բոլորովին հիւանդութիւն չունիմ : Գու առողջ կացիր , ես դնում եմ այնտեղ , ուր չկայ մէկ հատ հիւանդութիւն : Ա՛հ հիւանդութիւնը ինչպէս մաշեց իմ սիրտը . սիրելի որդեանկ , դու լաւ կացիր ,” յետոյ վեր կալաւ փրկչի պատկերը , որդուն օրհնեց եւ պատկերը տալով նրան՝ ասաց , “ անն քո Հայրը . սիրէ սրան բոլոր որդիական սիրով եւ հաւատան ինձ սիրելի իմ , որ Աս

անկի լա կը պահպանէ, քեզ եւ կօղնէ քո ամենայն  
դարձ քերիդ մէջ „ :

Ազէքսանդրը հօր կամքին հնապանդեց , դայիմ  
կայցրեց դոչին փրկչի պատկերը եւ խնայն դարձեցաւ :  
Թէպէտ նա երաններ չէր հաւատում , բայց այսպիսի  
խորհրդաւոր երանը շատ ներդրածեց նրա վրայ . նրա  
սրտի մէջ դանադան տրամութեան կարծիքներ ծաղկե-  
ցան : Ահով եւ դողով եւ մեծ անհամբերութեամբ ըս-  
տատում էր նամակին , ահա շուտով ստացաւ խը կղ-  
քօրից նամակ , որով խնայաւ , թէ “ հայրը երկար հի-  
ւանդութիւնից յետոյ վախճանեց է , ” : Նամակի վրայ որ  
տեսաւ սեաւ մուկը , խնայաւ խը տարաբաղդութիւնը ,  
դողդողով վեր առաւ եւ անողոպ , անուշքում խոք ըն-  
կաւ գետնի վրայ : Յետոյ աչքերը բաց արաւ եւ յող-  
ւոց հանելով ասաց , “ ուրեմն երանը չէ խարեղ ինձ .  
նէ սիրելի ծնող խմ , դու գնացիր երանելի աշխարհը ,  
ուր չկայ եւ ոչ մէկ հիւանդութիւն եւ արտամութիւն .  
ինչի թողիր ինձ մէնակ այս աշխարքի մէջ առանց  
առաջնորդ եւ առանց մխիթարիչ : Ա՛ր է հիմի այն  
քաղցր հայրս , որոյ առաջ կարող էի ասել խմ արդա-  
մութիւնը եւ ուրախութիւնը , որ իմ ամենայն բանում  
գէպ ի լաւը աանողն էր : Առտի նման նրա աչքերից  
սկսեցին թափիլ արտասուէնքները . յետոյ չոքեց եւ  
արտասուէնքները սրբելով ասաց , “ չէ , եւ աշխարհի  
երեսին մէնակ չեմ , չեմ եւ առանց առաջնորդ . ո՛վ  
փրկիչ խմ , քեզ պահ տուեց ինձ խմ հայրը , նրա կտա-  
կը այն է , որ սիրեմ քեզ բոլորով սրտիւ . ո՛վ փրկիչ խմ ,  
մխիթարութիւն չնորհէ ինձ , սո՛ւր ինձ կարողութիւն  
համբերելոյ ” : Փափկասիրտ Ազէքսանդրի վիշտը եւ ցաւը  
անպարտէկի էր , ի դուր կէն նրա ընկերները աշխա-

տում մխիթարել նրան , ի դուր էին յորդորում նրան .  
նա լաց էր ըլում եւ հեկեկում էր փոքր երախայի պէս .  
վերջը գնաց նրա մօտ վերատեսուչը : Աղէքսանդրը  
գոչելով եւ արտասուելով վաղեց նրա մօտ , ընկաւ նրա  
ոտների տակ այն յուսով , որ կարողանայ պատմել նը-  
րան իւր սրտի դարդերը եւ բոլոր տարաբաղդութիւնը .  
Բարի մեծաւորը արտասունք թափեց . նա սիրում էր  
Աղէքսանդրին բարի բարքի եւ ուսումնասիրութեան  
համար : “ Հաւատան ինձ , ասաց նրան վերատեսուչը ,  
սիրելի իմ , դու այդպիսի աղնիւ հողւով եւ այդպիսի լու-  
սաւորութիւն ունենալով , աշխարհի երեսին որք չես  
մնալ : Ամենայն տեղ կգանես այնպիսի մարդիկ , ո-  
րոնք ուրախութեամբ կընդունեն քեզ , կպահեն քեզ  
որդու նման , : Յետոյ իբր թէ իւր խօսքերը  
հաստատելու համար մեծաւորը բռնեց նրա ձեռքը  
եւ տարաւ իւր ընտանեաց մօտ , ասելով , “ ղխտեմ , սի-  
րելի որդեակ , որ քոյ տարաբաղդութիւնը եւ ցաւը մեծ  
է , բայց ինչ կարող ենք անել . այդ Աստուծոյ կամ-  
քըն է , պէտք է հնազանդինք նրա հրամանքին : Նրա  
սուրբ գործքերը մեզ երբեմն տրտմալի եւ անհաս-  
կանալի են ըլնում , բայց հաւատան ինձ որ միշտ օղ-  
տակար են եւ բարի ղխտաւորութեամբ , :

Այսպիսի հայրական խրատները հանդարտացրին  
Աղէքսանդրին , նա բոլորով սրտիւ իւր ղլուխը պահ-  
տուեց Աստուծուն . եւ երբ հայրը մէն էր գալի նրան  
եւ լալիս էր , ասում էր հաստատութեամբ . “ Նրկնաւոր  
հայր , սուրբ լինի Քո կամքը , : Հօր մահը Աղէքսան-  
դրի վրայ շատ լաւ ներգործութիւն ունեցաւ . պարապ  
ժամանակները փոխանակ բարոյական պատմութիւն-  
ներ կարդալու , սկսեց Աւետարանի եւ Աստուածաշնչի

սուրբ հրամանները եւ խրատները կարդալ , սրով նա իւր հողին եւ սիրտը զարդարեց աւելի մեծամեծ ճշմարտութիւններով եւ եղաւ կատարեալ մարդ : Երբ Աղէքսանդրի ուսման աւարտելոյ ժամանակը շատ մօտկացաւ , վերապետուց ի հարցրուց Նրան . « կըհս մաճայնիս սիրելի որդեակ , այս քաղաքիս կոմսի (դրաֆ) որդու հետ կենալ եւ նրան զանազան գիտութիւններ սովորցնել . դու մէկ տարի այս քաղաքում կը մնաս եւ յետոյ կերթաս Սերոպայ եւ այնտեղ աւելի բարձր լուսաւորութիւն կը ձարես » : Աղէքսանդրը համաձայնեցաւ եւ շատ շնորհակալութիւն արեց իւր մեծաւորին , նրա ամենայն բարերարութեանց համար :

Աղէքսանդրը համալսարանից դուրս գալուց յետոյ գնաց կոմսի մօտ , որ մեծ սիրով եւ ուրախութեամբ ընդունեց նրան , ասելով . « ձեր պատուելի մեծաւորը ձեզ շատ է գովել ինձ մօտ , մինչեւ անգամ ցանկացայ ծանօթանալ ձեզ հետ եւ իմ որդին էլ ընկերացնել ձեզ : Իմ որդին հիմի սովորում է մեծ մեծ գիտութիւններ այս քաղաքի լաւ լաւ վարժապետներից . նա բնական շնորհք ունենալով , արդէն բաւական յառաջադիմութիւններ է արել ուսման մէջ : Բայց որդիս հիմի այնպիսի հասակումն է , երբ երեխէրք զգում են լաւ բարեկամի եւ ընկերի հարկաւորութիւնը : Ես էլ դիտենալով ընկերի նշանակութիւնը , կամեցայ այնպիսի օքամին ջոկել , որ համ լաւ վարք ունենայ համ լաւ լուսաւորեալ միտք , որ իւր օրինալով կարողանայ որդւոյս աւելի լաւացնել եւ խելօքացնել : Ես շատ շնորհակալ կըլնիմ ձեզանից , եթէ համաձայնիք կենալ իմ տանը , ընկերանալ որդւոյս եւ որդիանալ իմ բոլոր ընտանեացը . չիչ ժամանակից յետոյ կուղարկեմ

ձեզ օտար աշխարհներ » : Աղէքսանդրը պարկեշտութեամբ համաձայնեցաւ մեծաւորի հետ : « Ինչ բան հարկաւոր կլինի ձեզ համար , ապա կամը եւ կտամ ձեզ , ամենայն բանի հոգսը եւ կը քաշեմ . եւ հաւատացէ՛ք ինձ , սիրելի որդեակ , որ ճանապարհորդութիւնիցդ հետ դառնալու ժամանակը բողբոջի՛ն չէք փոշմանիլ արած գործքիդ վրայ , այլ միշտ շնորհակալ կընիք հնձանից » :

Մէկ քանի օրուանից յետոյ Աղէքսանդրը դնաց կոմսի տուն : Արմատի որդին հէնց առաջին օրից սիրեց նրան եւ համարեան եղբայրացաւ նրա հետ : Հայրը եւ մայրը տեսնելով նրանց բարեկամութիւնը եւ սէրը մեծ յոյսեր ունէին , էնդոր էլ պատուում էին Աղէքսանդրին եւ սիրում էին ինչպէս իւրեանց հարազատ որդուն : Աղէքսանդրը ուրախութեամբ ասում էր ինքն իրան . « ուրեմն ես էլ որք չեմ աշխարհի վրայ . այլ ունիմ հայր եւ մայր » : Մէկ տարինա մնաց կոմսի տանը , յետոյ սաղ երեք տարի ճանապարհորդութիւն էր անում կոմսի որդւոյ հետ Եւրոպայում : Այն երեք տարուեր Աղէքսանդրը սովորում էր այլ եւ այլ վարժապետաների մօտ դանազան բարձր դիտութիւններ . եւ սոն երեք տարին նրա համար ամենալաւ ժամանակն էր , էնդոր որ կարողացաւ կատարելագործել իւր դիտութիւնները եւ լուսաւորել հոգին եւ սիրտը :

Ճանապարհորդութիւնից երբ որ յետ դառաւ Աղէքսանդրը , կոմսը լիութեամբ կատարեց իւր խոստամունքը : Աղէքսանդրին պատուական ծառայութեան տեղ տուեց , ծանօթացրուց երեւելի մարշիւրանց հետ եւ դեղիցիկ տուն տուեց նրան կենալու : Աղէքսանդրի վիճակը , առանց սխալման կարելի էր աւել , դառել էր ցանկալի ամէնքի համար : Մէկ տարուանից յետոյ Աղէք-

սանդրը հրամանք խնդրեց իւր գիւղը գնալու, որ երբեմն նրա հօրն էր սրտականում, ինչտեղ անց էր կացրել իւր մանկութեան օրերը՝ կամեցաւ գնալ այնտեղ հօր գերեզմանը համբուրելու համար: Նրա սիրտը վաղուց քաշում էր նրան այն կողմը. բայց մինչև այն ժամանակը հանգամանքները չէին ներում նրան: Աղէքսանդրը գնաց իւր հայրենիքը, ճանապարհին դիւղից մէկ քանի մղոն (վերտո) հեռու վէր եկաւ մէկ պանդոկի (տրախտիլի) մէջ: Առաւօտը վաղ նրան ասացին թէ մէկ սղնիւ խեղճ մարդ քեղնից սղորմութիւն է խնդրում: Աղէքսանդրը կանչեց իրան մօտ այն սղնուսեկանին: Բայց տեսէք նրա դարմանքն՝ ճանաչեց նրան. . . նա իւր եղբայրն էր, որ հօր ժառանգութիւնը դիւի փշացրել էր եւ մեծ խղճութեան մէջ էր ընկել. աղգականերից մէկը նրան գրադիր էր նշանակել մէկ տեղ, բայց ըստ ամենայնի յետին չքաւորութեան մէջ էր եւ ճանապարհորդներից միշտ սղորմութիւն էր խնդրում: «Սիրելի եղբայր իմ, աղաղակեց Աղէքսանդրը, քեզ եմ տեսնում արդեօք այդ վիճակի մէջ. . . . Ինչ հայր իմ: Գու միթէ իր կարծելի թէ քո վտակամբ եւ հարստութեամբ մեծացրած որդիդ այս տեղը կըլինի, այսպիսի դրութեան մէջ. . . »:

Արտասուչները սկսան թափել նրա աչքերից, եղբայրական սիրով եւ բարեկամութեամբ փաթաթուեալ իւր եղբօրը եւ ասաց նրան այս խօսքերը: «Չէ սիրելի եղբայր իմ, դու այդ վիճակում չը պէտք է մնաս, դու գր'ուէից սր հօրի, դր'ուէիցս քոյ ծնողի ժառանգութիւնից. բայց դու ունիս եղբայր, որ միշտ պատրաստ է մասն եւ բաժին տալ քեզ իւր ունեցածիցը: Ես գեղեցիկ ծառայութեան տեղ ունիմ, ունիմ եւ պա-

հապաններ . եւ քանի եւ կենդանի եմ , դու ոչ մէկ  
բանում պակասութիւն չես տեսնի . հիմի պէտք է ինձ  
հետ դաս ,, : Միքայէլը հեկեկում էր միայն , մէկ ի.օսք  
չէր կարողանում ասել . շատ զարմացաւ նա , որ իւր  
եղբայրը , որին երախայութեան ժամանակը անպա-  
տուել էր , որի վրայ շատ ծիծաղել էր , փոխանակ  
բարկանալոյ եւ անարգելոյ աջնալիսի ուրախութեամբ  
ընդունեց , եւ աջնալիսի քաղցր խօսքերով հետ բերեց  
նրա սիրտը :

Երկար խոսալուց յետոյ նրանք ճանապարհ ընկան  
դէպ ի իւրեանց հայրենիքը : Երկուսն էլ շոքեցան ծը-  
նողաց գերեզմանների վրայ , եւ առուի նման արտա-  
սունք էին թափում , մէկը՝ իւր հօր մարմնոյ վրայ ,  
որի հողը սուրբ էր նրա համար եւ մեծ շնորհակալու-  
թիւն էր անում նրան կրթութեան եւ լուսաւորութեան  
ճանապարհը ցոյց տալու համար , միւսը՝ դստը դա-  
ուր արտասունքներ էր թափում աշխարհութեան ,  
եւ անպատուում էր եւ արհամարհում էր իւր զլուխը  
ծուլութեան համար : Քիւղից Աղէքսանդրը տարաւ  
իւր եղբօրը իրա հետ . հոգս էր քաշում նրա համար  
եւ պահում էր փառքով եւ պատուով . ժամանակ ժա-  
մանակ տալիս էր նրան թղթեր դուրս գրելու համար :  
Միքայէլը տեսնելով ուռման լաւ հետեւանքները , նոր  
ցանկացաւ սովորիլ . . . բայց շատ ուշ էր : Ասում են  
սովորութիւնը երկրորդ բնութիւն է . բայց նա երեխու-  
թիւնից սովրել էր միայն պարապորդութիւն եւ ծու-  
լութիւն : Թէպէտ Աղէքսանդրը նրա հետ լաւ էր վար-  
վում , շատ պատուում էր նրան , բայց ըստ ամենայ-  
նի Միքայէլը տխուր էր : Նրա ելեոյի վրայ մէկ ժպիտ  
չէր կարելի տեսնել , միշտ տրտում էր եւ տխուր :

Աղէքսանդրը մէկ անգամ յանկարծ մտաւ սենեակը .  
տեսաւ ելբօրը լաց ընկելիս . հարցրուց նրան , “ ուր  
ես լսլի , իսո՞ւմ նչինչ պակասութիւն չունիս ” . նա յող-  
ւաց հանելով աւատասխան տուեց : “ Ես լաց եմ լինում  
այն բանի համար , որ էլ չի կարելի յետ բերել . . . .  
. . . Ո՞վ մանկութիւն , քաղցր մանկութիւն . . . ինչի միւս  
անգամ չես գրլի . էն ժամանակը քեզ այնպէս չէի  
գործածի , ինչպէս իմ առաջին մանկութեանս ժա-  
մանակը ” :

Գ . Տ . Ա . .

Տ Ի Պ Բ Ա Ն Ե Լ Ե Պ Ա Յ Ի Ա Ն Է .



Տիղրանը եւ Պայխանէն որք Ճնային իւրեանց ծը-  
նողաց մահից յետոյ . Տիղրանն էր ութը եւ նորա քոյր  
Պայխանէն էր վեց սարեկան : Իւրեանց ծնողացմէն  
զրկուելուց յետոյ նրանք օչովից չէին լսել մէկ քաղ-  
ցըր խօսք , օչով չէր աշխատում նրանց պահպանելու  
կամ խրատելու համար . մէկ օքմինն ոչ վառ գործքերի  
համար էր նրանց պատժում եւ ոչ լաւ գործքերի հա-  
մար դուլում : Պիւղացոց մէկը տեսնելով նրանց ո-  
ղորմելի դրութիւնը , վեր առաւ իւր գո՛ւը ոչխարներ  
արածայնելու համար :

Առաւօտները գնում էին մեր որք երեխերքը ոչ-  
խարներ արածելու , վտքը հացի կտոր էին տանում իւ-  
րանց հետ ուտելու եւ երեկոյցին յետ էին դառնում տուն  
եւ քնում էին ոչխարների հետ գոմումը : Նրանք լաւ  
հասկանալով , որ չունին մէկ հատ աէր ու տիրական ,  
մէկ սրտացաւ օքմինն , սկսեցին միմեանց շատ սիրել ,  
միմեանց համար հոգս քաշել եւ միով բանիւ նրանք  
էին լաւ օրինակ եղբայրական սիրոյ : Արանից սովահի  
որբերը ունէին մէկ լաւ ընկեր , որ սիրում էր նրանց  
չափիցը դուրս . այն ընկերն էր հաւատարիմ շուն կա-  
թորը : Նա ընկերակից էր երեխանց հետ թէ աղբա-  
մուծեան եւ թէ ուրախութեան ժամանակը :

Արք որ երեխերքը լաց էին ընում , կատթորը ընկնում

էր նրանց սաների տակը տխուր եւ նրբ որ երեխէրքը  
ուրախ էին , երբ Վայխանէն երգում էր իւր եղբօր սիրելի  
երդը եւ Տիգրանը ամում էր շահն , շունը ուրախ ու-  
րախ խաղում էր եւ թրչոտում էր որբերի չորս կողմը ,  
կամենալով ջոջ սալ եւս իւր ուրախութիւնը եւ բա-  
ւականութիւնը : Բայց հաւատարիմ շունը միեւնոյն  
ժամանակը չէր մտնում եւ իւր պարտաւորութիւն-  
ները , դրոշութիւնով պահպանում էր սուրուն գայլերից :

Մէկ անձրեւ օր Տիգրանը եւ Վայխանէն նստած էին  
միասին , էն ժամանակը նրանց մօտով անց կացաւ մէկ  
որսորդ , որ տեսնելով երեխանց , շատ դարմացաւ  
Վայխանէի գեղեցկութեան վերայ : Նա մտկայցաւ նը-  
րանց եւ սկսեց հարցումիտրձ առել , թէ ով էն նբանք  
ովքեր էն նրանց ծնողները եւ այլն : Նրբ երեխանցից  
խնայաւ բոլորը մանկ ամա սնա բար , որսորդը բան չա-  
սաց , դնաց իւր ճանապարհը : Նա գնաց լւրս ուն , պատ-  
մեց կնոյան երեխանց հետ պատասխելու վերայ , գովեց  
Վայխանէին , եւ որովհետեւ նրանք որդի չունէին ա-  
ռաջարկեց իւր կնոյան Վայխանէին վերառնել եւ իրանց  
աղջիկ շինել : Այն որսորդը մէր որբերի պարուն Պետ-  
րոսի հօրեղբօր որդին էր : Նա խնդրեց Պետրոսին , որ  
որբ աղջկան իրան որդեկիր շինէ : Պետրոսը համաձայ-  
նեցաւ : Միւս օրը որսորդը գնում էր քաշաք , կտուէթը  
հաղիր էր . նա ուղարկեց մէկ մարդ , Վայխանէին բերին :  
Որսորդի կնիկը գառնալով դէպի աղջիկը ասաց՝ « Մի-  
րելիդ իմ , էս օրից յետոյ դու ինձ մօտ կմնաս , ես կը-  
մեծացն'մ քեզ . տէրութիւն կանեմ քեզ , ես կտրահեմ իմ  
որսու պէս » : Վայխանէն շատ ուրախացաւ եւ էն բող-  
ին խելի շնորհակց , թէ կամենում էին հետացնել նրան-  
կըրօրիցը , որին սիրում էր ամենայն բանից առելի :

“Նստի սիրելի ինձ մօտ, ասաց որսորդի կնիկը,  
նստելով իւր մարդոյ հետ կառէթի մէջ :

Քայիանէն էն ժամանակը խմացաւ , թէ հեռանում  
է իւր եղբօրից . . . . բայց Տիգրանը , իմ խեղճ Տիգրանը :  
Տիգրանը տեսաւ , ինչպէս իւր քրոջը լացընելով նրա-  
տեցրին կառէթի մէջ , էլ խօսք չասեց . վազ տուեց  
նա կառէթի ետեւից : Քանի ուժ ունէր վազում էր  
Տիգրանը . բաւականի տեղ անց կացաւ , բայց վերջա-  
պէս շատ բեզարեց , էլ ոտի վերայ չկարողացաւ կանգ-  
նել . վէր ընկաւ խեղճը անուշքումիտք : Շատ ժա-  
մանակ ընկած էր երեխէն գեանի վերայ , չէր դգում  
նչ ցուրտը , նչ քաղցածութիւնը : “ Ել ինչի պէտք է  
ապրիմ ես աշխարհիս երեսին . վնայ ինձ , քրոջս խել-  
ցին . . . . հիմա ես մենակ եմ . . . մենակ բոլորո-  
վին , , ասաց Տիգրանը ուշքի գալով : Նրա աչքերից  
արտաստնքը առուի նման էին թափուում . յետոյ  
տեսաւ իր մօտ հաւատարիմ շանը , որ չէր թողել նը-  
րան մէնակ : Տիգրանը տեսաւ , որ բոլորովին անընկեր  
չէ աշխարհիս վերայ . փառք տուեց աստըծուն .  
խտտեց իւր շանը եւ համբուրելով նրան , ասաց՝ խեղճ  
չուն . դուն էլ էիր սիրում Քայիանէին , նրան խելցին  
մեղնից . . վախցրին . . . բայց մի նեղանար չվերայ-  
բերեց Տիգրանը . կամենալով հեռացնել իւր ցաւը եւ  
տրտմութիւնը . մենք նրան կգտնենք , չէ , սիրելի իմ  
եւ հաւատարիմ կասթնր , : Շունը որպէս թէ խմացաւ  
Տիգրանի խօսքերը , ուրախութեամբ սկսեց խաղալ ,  
պոչը ժաժ տալով եւ երեխայի չորս կողմը վազելով :

Տիգրանը գնաց դոմը : Միւս օրը , երբ որ նա ա-  
հու դողով հարցնում էր դոմի տիրոջը իւր քրոջ ափա-  
լը , “ թէ նա ո՞ւր է գնացել եւ թէ շուտով կգայ , ” դո-

մի տէրը , բարկանալով «գատասխանեց» « քու բանը  
 չէ էտուր վերայ քննութիւններ անել . . . . : Երեւում է ,  
 որ դեռ մինչեւ հիմայ ոչխարները չես տարել արածե-  
 լու , շուտով դնան բանիդ , [թէ չէ հասնան . . . . ] : Տիգրանը  
 օչովից չկարողացաւ խմանալ դոմուսը , [թէ ուր տա-  
 րան իր քրոջը , ոմանք չէին խմանում , միւսներն էլ  
 չէին կամենում յայտնել նրան : Յաւոտ եւ դարդոտ  
 սրտով վեր կալաւ իւր չոմբաղը եւ քշեց ոչխարները  
 արածացնելու :

Էն օրը խեղճ երեխային շատ երկար եւ ցաւալի  
 թուեցաւ : Ո՛չ մէկ բան չէր ուրախացնում նրան ,  
 հաւատարիմ շունն էլ անդամ չկարողացաւ մխիթարել  
 նրա սիրտը : Տիգրանը շատ դառը դառը արտասուենք  
 թափեց . . . էս առաջին օրն էր նորա միայնութեան :

Բայց յանկարծ նորա երեսը փայլեցաւ եւ փոքր ինչ  
 ուրախանալով սասաց՝ « Ես ի՞նչ վատ երեխայ եմ էլէլ ,  
 միթէ չպէտք է ուրախանամ , որ քոյրս չէ մասնակից  
 այս խճառը վիճակիս , նա հիմայ կուշտ կլինի , լաւ  
 շորեր կուեննայ հաքին . նրան լաւ լաւ բաներ կը-  
 սովրացնեն , դիրք կարդալ , գրել . նա բաղդաւոր կը-  
 լինի . . . փնփնք Աստուծոյ , կդայ էնպիսի օր , որ մի-  
 մեանց էլ կտեսնէնք ուրախութեամբ » : Էն օրից յետոյ  
 Տիգրանը չէր գանդատ անում իւր վիճակի վերայ . նա  
 գիտէր , որ միայն ինքն էր նեղութեան մէջ , գիտէր  
 որ միայն ինքն էր չարչարում ցրտից եւ քաղցածութիւ-  
 նից . բայց իրա քոյրը սմենայն բանով բաղդաւոր էր եւ  
 լաւ դրութեան մէջ : Այսու սմենայնիւ Տիգրանը թէ-  
 պէտ աշխատում էր յաղթել իրա դարդերին . բայց  
 օրէց օր խեղճը լղարում էր եւ բարի մտքերը նրան  
 մախկ անելով ասում էին՝ « Ես իմե՞նք գիտե՞ս » :

3003  
 14480  
 08441



ճառ կմեռնի , եթէ իւր քրոջ մօտ չտանեն » :

Բայց Քայիանէին պահում էին աղջիկպարոնի պէս , նա էլ իրա եղբօրը միտ բերելով շատ էր նեղանում եւ շատ դարդ անում : Քայիանէի հոգեմայրը կարծում էր , թէ լաւ կեանքը , լաւ հագուստները եւ կերակուրները , կհարկադրեն նրան մոռանալ եղբօրը . բայց ընդ հակառակն , նա շատ սխալուեցաւ :

Երբ որ Քայիանէն նստած էր ընում սեղանի վերայ , պատուական կերակուրներ էր ուտում , անդադար միտն էր բերում իւր սիրելի եղբօրը : Ասում էր յոգևոց քաշելով , « շատ կարելի է , որ հիմայ Տիգրանը սեաւ հացի կտորից աւելի ոչինչ չունենայ , նա միայն չոր հացով , առանց տաք կերակրի պէտքէ լցուցանէ իւր քաղցը : Ա՛խ սիրելի եղբայր իմ , ասում էր մտիկտալով իր գեղեցիկ շորերին . դու հին գջրոած շորերից աւելի ոչինչ չունիս . սրեզակը իւր սաստիկ տաքութիւնով , անձրեւները եւ քամին իրանց սառնու՞թիւնով նեղացնում են քեզ , թացն անում քո շորերդ եւ սառսուոց են գցում ջանիդ մէջ : Ա՛յ իմ գլխին , ա՛խ իմ Տիգրան , ասում էր աղջիկը գոգենքի վրայ , դու հիմայ քնած ես գոմումը ոչխարների հետ դարմանի վրայ : Յշով չունիս մտիկ տուող եւ մէկ բանով քեզ ուրախացնող : Բայց երբ որ մենք միասին էինք բնակում , մեր սէրը օգնում էր մեզ , մեր ամենայն նեղութիւնները հեշտացնելու համար . մենք ուրախ էինք երբ որ միասին ուտում էինք սեաւ , չոր հացը . . . : Ա՛խ սիրելի եղբայր , ինչպէս տարաբաղդեմ ես էլ , առանց քեզ . . . » : Ա՛յ մէկ բանով չէր ուրախանում Քայիանէի տխուր սիրտը , ո՛չ զանազան խաղաղիքները , ո՛չ բազերը , ո՛չ թատրոնները եւ ո՛չ հոգեմօր սաստիկ սէ

ըր , չէին կարողանում մոռացնել սիրելի Տիգրանին ,

Երբ որ նորա հողեմայրը ասաց , թէ՛ ժամանակ է ուսում սունելու , աղջիկը խնդարով ասաց ինքն իրան ուրեմն ես կկարողանամ նամակ գրել իմ Տիգրանին եւ Էնպէս խօսիլ նրա հետ : Էս դիտաւորութիւնն ունենալով սկսեց սովորել այնպիսի աշխատութեամբ , որ մէկ ամսուայ մէջ կարողացաւ լաւ գրել եւ կարգալ : Բայց չափիցը դուրս աշխատանքը , գիշեր ցերեկ կտարիլը սովորելու համար եւ անդադար եղբօր վրայ մտածելը , խանգարեցին նորա աւողջութիւնը . . . խեղճ աղջիկը հիւանդացաւ :

«Նրան գիւղըն ուղարկեցէք» ասաց բժիշկը հողեմօրն , «քաղաքի հաւէն մնաս է դրան» : Տանտիկիւնը չկամենալով հակառակել խելօք բժշկի խորհուրդին , ուղարկեց Վայիանէին գիւղը :

Երեք ամիս էր , որ Վայիանէն չեր տեսել Տիգրանին :

Երբ որ հասաւ գիւղը վաղեց շուտով գոմը անհամ բերութիւնով . իւր եղբօր մասին ասացին թէ , նա տանը չէ , գնացել է տափը : Ոչխարներ արածացնելու համար :

Իւր հիւանդութեանը չմտիկ տալով , աղջիկը գնաց դաշտը : Տիգրանը դարդոտ նստած էր ծառի տակը , ածում էր շուին ոչխարները պահպանելու համար : Շունը ինչպէս սովոր էր նստած էր նրա մօտ : Տիգրանը մեծ մտածութեան մէջ մտաւ , երբ որ յանկարծ տեսաւ իւր առաջին զեղեցիկ շորերով զարդարած աղջկան , որը որ մեծ ուրախութիւնով մտիկ էր անում նրան : Տղէն չխմացաւ , որ էն աղջիկը իրա քոյրն է : Շունը առաջ առաջ ընկաւ նրա ոտների տակը խըն դալով :

“ Տիգրան . . . , ասաց Քայիանէն ընկնելով եղբօր  
դիրկը : “ Քայիանէ . . . , բղաւեց երեխէն , խնդալով եւ  
փաթաթվելով իւր քրոջը : “ Նս յետ եմ դառնում էն  
աշխարքից քեզ մօտ պէտք է լինիմ . շարունակեց  
Քայիանէն եւ միւս անգամ էլ չեմ հեռանալ քեզանից  
սիրելի եղբայր իմ , ” :

Տիգրանը մտքումը աղօթք էր անում եւ շնորհակալու-  
թիւն էր մատուցանում Աստծուն , որ էլի սրժա-  
նացրուց նրան իւր քրոջ միւսանգամ տեսութեան :

Հաւատարիմ շունը չզխտէր ինչ անի ուրախու-  
թիւնիցը , վազում էր երեխանց մօտ , լիզում էր նրանց  
ձեռները , հաչում էր խնդալով եւ պոչը ժածտալով :

“ Ինչի ես դու էզպէս դեղնած , սիրելի Քայիանէ , ”  
ասաց Տիգրանը , տրամութեամբ մտիկ անելով իւր քրոջ  
երեսին :

— “ Նւ դու էլ շատ ես փոխուել , ” ասաց Քայիանէն :

“ Միթէ կարծում էիր , թէ ես կարող էի լինել առանց  
քեզ բողբուռոր , ” :

Գոմի տէրը , որ էն ժամանակը մտիկ էր անում իւր  
սուրուին , վկայ էր այս տեսարանիս : Կարծես թէ  
երկնային լուսով լքցուեց նորա անգութ սիրտը . կա-  
րելի է ասել , որ իրա կեանքումը էս անգամից  
աւելի նրա գութը չէր շարժուել այսպիսի բարեկամա-  
կան սիրով : Նրա աչքերիցը սկսեցին թափիլ արտա-  
սունքներ :

“ Կարելի է ասեն սրանք , ասաց ինքն իրան գոմի  
տէրը , թէ իմ մէջ քիչ զգացողութիւն կայ , քան թէ  
էս շան մէջ , ” . մոտ կենալով Տիգրանին եւ Քայիանէին  
ասաց՝ “ աւկանջ արէք ինձ սիրելիք իմ , ես որդիք չու-  
նիմ , որոնք կարողանան սիրել ինձ այն սիրով . որով

դուք սիրումեք մխեանց : Սթէ ինձ կսիրեք ամենայն  
արտով ձերով , ես իմ որդիք կըշինեմ եւ կհոգամ ձեզ  
համար հօր պէս ,, :

Նրախտադիտութեան եւ ուրախութեան արտասու-  
քով , երեխայքը ընկան դոմի ափրոջ թանկերի տակ :

Էն օրից յետոյ Տիգրանի եւ Քայխանէի բազղը բա-  
նեց , նրանք դոմի ափրոջ որդեպէր դառան :

Գոմի տէրը ամենայն օր իւր բարի գործը միտը բե-  
րելով , փառք էր տալիս Աստուծուն , որ այնպիսի մարդ-  
կան եւ Աստուծոյ դուրեկան միտք ծաղեց նորա սրբ-  
տումը , եւ անդադար ստում էր իր տանու քահանա-  
յին՝ « Ա՛լիս , տէր հայր , ես հիմայ եմ համարում ինձ  
կատարեալ բազղաւոր մարդ : Էս երեխայքը զարթա-  
ցրին իմ սրտիս մէջը քնած գութս եւ զգացողու-  
թիւնս եւ ես լաւ կհամարիմ մեռնել , քան թէ հեռա-  
նալ այսպիսի հրեշտակներից ,, :

2. Գ.

ԿԱՐՄԻՐ ԶՈՒ .

Գ Լ . Ա .

Միթէ՞ էստեղ հաւեր չկան :



Մէկ փոքր ձորի մէջ , որ ամէն կողմից պատած էր սարերով եւ անտառներով , բնակում էին խեղճ գործըրապաններ : Նրանց տները անկարգ եւ անկանոն փռուած էին էստեղ եւ էնտեղ , ամենայն տան առաջ կային տնկած խնձորենիք , տանձենիք եւ զանազան ծառեր : Գիւղացւոց գլխաւոր գործը գործըրապանութիւնն էր . կատուրից սաւահի ոմանք նրանցից այժեր էին պահում : Թէպէտ նրանք շատ ողորմելի վիճակի մէջն էին , շատ աղքատ էին , բայց ըստ ամենայնի շնորհակալութիւն էին մատուցանում Աստծուն եւ բաւական էին իրանց ունեցածովը :

Մէկ անգամ շատ շոք օր մէկ գործըրապանի աղջիկը , որ սարերի վրայ արածում էր խը հօր այժերը , վազեց դէպ ի տուն եւ պատմեց ծնողաց թէ՛ « սիրելի հայրիկ եւ մայրիկ իմ մեր ձորումը եկել են անծանօթ մարդիկ , շատ գեղեցիկ շորեր ունին հաքին եւ նրանց խօսելը բողորովին չեմ հասկանում , մէկ ինչ որ լեզուով էին խօսում : Մէկ կնիկ է շատ գեղեցիկ , երկու երեխայ եւ մէկ էլ ծեր մարդ : Նրանք շատ քաղցած են եւ շատ էլ բեղրած են խեղճերը , էլ չեն կարողանում տեղից ժաժգալ : Ես պտուտում էի կորած այժը եւ յանկարծ տեսայ այն անծանօթներին մէկ ծառի տակը նստոտած : Ա՛խ ծնողք իմ , այն խեղճերի համար մենք պէտք է հողս քաշենք , տանենք նրանց համար ուտելու եւ խմելու բան եւ էս գիշեր բե-

րենք մեր տուն որ հանդատանան » : Հայրը եւ մայրը իրանց աղջկայ ճշմարտախօսութիւնը վաղուց դիտենարով , հաւատացին նրա խօսքերին : Իսկոյն վերկալան իրանց հետ հաց , կաթը եւ պանիր . գնացին իրանց աղջկայ հետ անձանօթներին տեսնելու : Գործըսպանը եւ նրա կնիկը շուտով մօտ կացան անձանօթներին , որոց գեղեցիկ շորերը տեսնելով , խնայան որ նրանք անպատճառ պէտք է լինին ազնուական եւ հարուստ մարդիկ : « Մտիկ տուր , ասաց գործըսպանի կնիկը , մտիկ տուր էն կնգայ գեղեցիկ դերիին՝ տես ինչ սիրուն ոտնամաններ ունի հաքին , » :

Գործըսպանը բարկացաւ իրա կնգան ասելով . ինչ էլաւ այ կնիկ , քու խելքու միտքը դիւի հաքուստի մէջն է ու , ինչ էլաւ քեզ , սրանք հարուստ մարդիկ են , ուրեմն լաւ էլ պէտք է հաքենն . քայց լաւ խնայիր որ մարդու շորերը , հողին բողբոլին չեն գեղեցկացնի : Շատ կարելի է , որ սրանք մեզանից աւելի տարաբաղդութեան մէջ լինին , թէպէտ եւ գեղեցիկ շորեր ունին , » :

Գործըսպանը տարաւ կաթը , պանիրը եւ հացը եւ դուխ վերբերելով տուեց անձանօթներին : Անձանօթ կնիկը յետ քաշեց երեսի ծածկոցը , վեր առաւ հացը կաթի մէջ բրդեց եւ մեծ իշտահով կերաւ իրա երեսանց հետ , խեղճերը շատ քաղցած էին : Այն ծեր մարդը , որ նրանց ծառայն էր միայն պանրով եւ հացով բաւականացաւ : Մինչեւ նրանք կերակուրը կուտէին . համարեան բողբո գիւղացիկ ժողովեցան անձանօթների չորս կողմը եւ մեծ զարմանքով եւ անհամբերութեամբ մտիկ էին տալի նրանց :

Երբ որ ծերը կտաղաւ , հարցրուց գիւղացւոց . թէ

ձեր դիւղումը կ'այ այնպիսի տուն , որ մեզ տաք մէկ  
փոքր ժամանակ բնակելու . մենք ձեզ համար ծան-  
րութիւն չենք լինիլ , քանի ժամանակ էլ կենանք  
քրէհը իրա կարգին կտանք ձեզ : « Խղճացէք , ասաց  
անձանօթ կնիկը հանդարտ ձայնով , խղճացէք ինձ  
տարաբարդ մօրս եւ այս կրեխանցը , որոնք դուրս են  
արած իրանց հայրենիքից , իրանց սիրելի հայրենի  
քից , » :

Գիւղացիք ջոկ ժողովուեցան մէկ տեղ խորհուրդ ա-  
նելու , թէ արդեօք ո՞ւմ տունը տան անձանօթներին :

Հեռուից երեւում էր մէկ ջաղաց , ջաղացի մօտ մէկ  
փոքր լաւ տուն էր շինած , թէպէտ փայտեայ , բայց  
ըստ ամենայնի գիւղի բոլոր տներիցը լաւն էր . ամէն  
կողմից պատած էր ծառերով եւ սուջեւը ունէր մէկ  
փոքր պարտէզ : Ջաղացպանն ասաց իրա ընկերին  
արի իմ տունը կտամ անձանօթներին . « իմ տունը  
բոլորովին նոր է , ասաց ջաղացպանը անձանօթ կըն-  
գան եւ ես ուրախութեամբ կտամ ձեզ : Գիտի մէկ ա-  
միս չի լինիլ որ վերջացրի սրա շինութիւնը . էս օրե-  
րումը ուզում էի հին տանիցս զնալ նորը , բայց որով-  
հետեւ ձեզ հարկաւոր է , ես ձեզ կտամ ուրախու-  
թեամբ , » :

Անձանօթ կնիկը շատ ուրախացաւ եւ շատ էլ շնոր-  
հակալութիւն արեց ջաղացպանին նորա հիւրնակալու-  
թեան համար : Փոքր ինչ հանգստանալուց յետոյ  
անձանօթները կտմաց կտմաց զնացին դէպ ի պատ-  
րաստած տունը : Տան մէջը բոլոր հարկաւոր սար-  
քուկարգը պատրաստ էր . աթոռները , սեղանները եւ  
կառաւաթները տեղաւարած էին ինչպէս հարկն էր :

« Ո՞վ կը մտածէր , որ ես պալատների մէջ մեծացած

աղջիկս , առում էր անձանօթ կնիկը , ինձ բաղդաւոր համարեմ այս տան մէջ : Ա՛հ , ինչպէս հիւրնկալ մարդիկ են էլել այս գիւղացիք , չիմանալով նաեւ իմ ու՛րջնեկը ինձ օգնեցին իրանց կարօղութեանց գեօրայ : Բաս հարուստները եւ մեծ մարդիքը ինչպիսի բարի եւ մարդասէր պէտքէ լինին . ինչպէս պէտքէ սիրեն իրանց հպատակներին եւ աղատեն նրանց ամենայն տարաբաղդութիւններից , :

Միւս առաւօտը անձանօթ կնիկը վաղ վաղ դուրս եկաւ տանից իրա երեխանցով , որ գիւղի հետ լաւ ծանօթանայ , տեսնի ինչպիսի դրութիւն ունի նա : Շատ դուր եկաւ նրան այն փոքր գիւղը . տները կարծես թէ հեռուից բաղումն էին . գիւղը ամէն կողմից պատած էր անտառներով եւ սարերով : Մէկ փոքր առու խշխշալով վազում էր գիւղի մէջ տեղովը . սարերի վրայ թէ բարձր եւ թէ ցածր , որ կողմը մտիկ էր տալի տեսնում էր այծերի սուրուններ : Այն օրը շատ ուրախութեամբ անցկացրին անձանօթները , մանաւանդ երեխայքը շատ էին խնդում մտիկ տալով ջաղացի շարխերի պտուտ դալուն :

Գիւղացիք ամենայն կերպով աշխատում էին անձանօթներին օգնութիւն հասցնել . տանում էին նրանց համար թէ կերակուր , թէ փայտ , թէ դորձլի եւ թէ ուրիշ հարկաւոր բաներ : Այն աղջիկը , որ առաջի անգամ պատահեցաւ անձանօթներին գնաց նրանց մօտ ծառայութիւն անելու , նորա անունն էր Մարթա :

“Առաջ առաջ ձուաներ բեր ,” , ասաց անձանօթը Մարթային :

“ Չուաներ , հարցրուց Մարթայն դարմանալով ինչ կանես ,” :

“ Ի՞նչպէս թէ ի՞նչ կանես . ասաց անծանօթը , եփե-  
լու համար , դնա՛ շուտով բեր , ” :

“ Եփելու համար , կրկնեց քոծը : Թռչունի ձուաները  
ի՞նչ է որ եփել , ի՞նչ պէտք է կշտացնեն այն մանր  
ձուաները . հարիւր ձուն մէկ մարդուն հազիւ թէ  
կշտացնեն , էտուրից առաւի մեղք էլ է այդ բանը , ” :

“ Ի՞նչ ես ասում , պատասխանեց անծանօթը շը-  
փոթուելով , ես թռչունների փոքր ձուաների համար  
խօսմ չեմ ասում . ես հաւի ձուաներ եմ ասում , ” :

Մարթայն էս որ խնայու գլուխը ժաժ տալով  
ասաց . “ Չէ , չեմ դիտի ի՞նչ թռչունի համար եք ասում .  
ես չեմ խմանում հաւն ի՞նչ է , ” :

“ Ի՞նչպէս կարելի է , բղաւեց անծանօթը , մի՞թէ այս  
տեղ հաւեր չկան , ” :

Այն աշխարհումը արդարեւ չկային տնային թըռ-  
չուններ , ո՛չ հաւեր եւ ո՛չ բաղեր . այնպէս որ անծա-  
նօթը չէր խմանում ինչպէս պատրաստի ճաշը : Հար-  
կադրուեց բաւականանալ միայն կաթնով , պանրով եւ  
հացով :

Այսպիսի դժուար դրութեան մէջն էր մեր անծա-  
նօթը եւ շատ էլ նեղանում էր . թէպէտ բոլոր դիւ-  
ղացիքը ինչ լաւ բան ճարէին , դիւի նրա համար էին  
վազեցնում : Եթէ ջաղացպանը ձկներ էր բռնել եւ կամ  
թէ գործչապանը անտառում թռչուններ էր սպանել ,  
տանում էին ողջ անծանօթների համար : Անծանօթի  
աւելի մխիթարիչն էր նրա ծեր ծառայն : Տալիս  
էր նրան թանգագին ակներ եւ ծառայն էլ տանում էր  
հեռու աշխարհներ , ծախում էր եւ զանազան հար-  
կաւոր բաներ էր առնում տան համար : Գիւղացիք  
վարավորդ էին անում , որ անծանօթը ծառայի ամէն

անդամ յետ դառնալու ժամանակը շատ տրամամ  
էր եւ երբեմն էլ լաց էր ըլում: Շատ կամե-  
նում էին իմանալ պատճառը, բայց ոչ մէկը նրանցից  
չէր համարձակում հարցնել անձանօթին: Մէկ օր  
գիւղացիքը անձանօթի որդիերանցը մէնակ դանելով,  
հարցրին նրանց սաս խնդրենք ձեր մօր անունն ինչ  
է. մի վախենաք օչովին չենք ասի,: Տղէն ասաց  
ցածր ձայնով. նրա անունը մայր է, աղջիկն էլ նոյն  
պատասխանը տուեց: Այնպէս որ նրանց պատասխա-  
նից գիւղացիք ոչինչ չկարողացան իմանալ:

Փանօք Աստուծոյ , հիմի հաւեր ունինք :



Մէկ անգամ հին ծառայն , որոյ անունն էր  
Կունոյ , հետ դառաւ ճանապարհորդութիւնից եւ բե-  
րեց իրա հետ ուսի վրա մէկ դափազայ աքլարներով եւ  
հաւերով լիքը : Գիւղի երեխէրքը , որ տեսան ծերին  
վաղեցան նրա մօտ խնդալով , էնդուր որ Կունոն ա-  
մէն անգամ բերում էր նրանց համար կամ սպիտակ  
հաց , կամ այծերի համար դանդաղակներ եւ ուրիշ դա-  
նազան խաղալիքներ :

Էս անգամին կամեցան տեսնել նրանք թէ՛ ար-  
դեօք ինչ կայ էն սպիտակ կտաւով ծածկած դափաղի  
մէջ : Երեխէրքը դնացին Կունոյի հետ մինչեւ անծա-  
նօթի տունը , որ տեղից ուրախութիւնով դուրս եկաւ  
անծանօթը իրա երեխացով , շատ շնորհակալութիւն  
արեց նա իւր ծեր ծառային : « Փանօք Աստուծոյ ,  
բարձր ձայնով ասաց նրա փոքր աղջիկը , փանօք  
Աստուծոյ մենք հիմի հաւեր ունինք , » :

Կունոն դափաղէն դրեց գետնի վրայ , բաց արաւ  
նրա դուռը եւ մէկ գեղեցիկ աքլար դուրս եկաւ էնտե-  
ղից . երեխէրքը երբ որ տեսան այն նոր թռչունը շատ  
դարմացան : « Ինչ գեղեցիկ թռչուն է է » բղաւեցան

ամէնքը միարեւրան , մեր օրումը այսպիսի պատու-  
ական թռչուն չենք տեսած մեր գիւղումը : Մէկ մը  
տիկ արէք սրա գլխի վրայ , ինչ սիրուն սանդր ունի  
չինած . տես պոչի բմբուլները , ինչպէս զանազան գոյ-  
ներով են զարդարած ,, : Արբ որ զափազից դուրս ե-  
կան բոլոր հաւերը եւ աքլարները , անծանօթը դուրս  
բերեց նրանց համար գարի եւ ածեց հաւերի առջևը :

Գարուոյ ուտելը որ վերջացրին , աքլարներից մէկը  
յանկարծ թևերը բաց արաւ եւ սկսեց կանչել : Արե-  
խէրքը ուրախութիւնից չէին կարողանում ոտի վրայ  
կանգնել եւ կիկլիկիկի ասելով դնացին իւրեանց տները ,  
նրանք պատմեցին իւրեանց ծնողաց այս ուրախալի  
անցքը մանրամասնաբար թէ « այնպիսի թռչուն տե-  
սանք , որ մեծ է ծոցից էլ եւ ազուաւից էլ . այնպիսի սի-  
րուն գոյն զգոյն թևեր ունին , որ խելի մեր թռչուն-  
ների վրայ չենք տեսել ,, : Մարթայի փոքր քոյրը այս  
խօսքերին աւելացրեց՝ « սիրելի մայրիմ , գլխների վը-  
րայ նրանք այնպիսի կարմիր գգակներ ունին , սիրուն ,  
պատուական , որ ո՛վ է տուել մեր անտառի թռչ-  
ուններին ,, : Արեխէրանց ծնողներից շատերին հետա-  
քրքրութիւնը յաղթեց , գնացին , տեսան անծանօթ  
թռչունը եւ զորդ որ նրանց էլ շատ զարմանալի երե-  
ւեց : Մարտ ամսին հաւերից մէկը թուխս նստեցաւ :

Անծանօթը մէկ օր ցոյց տուեց գիւղացւոց որդիե-  
րանցը հաւի բունը . նրանք շատ զարմացան , այն-  
քան ձուաներ տեսնելով բնումը : « Տասնուհինգ ձու  
կայ էստեղ , բղաւեցան նրանք . դրսի աղունակները  
միայն երկու ձու են դնում , միւս թռչունները հինգ ,  
եւ հնդից աւելի ձու դնող թռչուն մենք չենք տեսել մեր  
գիւղումը . ինչպէս կարող է այս հաւը կառավարել տա-  
ս

հուհինդ վառեկներին , :

Նրանք աւելի զարմացան էն ժամանակը , երբ որ տեսան անծանօթի բակումը հաւին առ հուհինդ վառեկների հետ ման գալիս : “ Ա՛չ մէկ բան սրանից լաւ չի լինիլ , ասաց գործընկերներից մէկը , սիրելի որդեակք . տեսնում էք վառեկներին ինչպէս իւրեանց մօր ձայնը խմանալով հնադանդում են նրան եւ կատարում նորա կամքը . շատ ցանկալի կըլինի մեզ հայրերի եւ մայրերի համար , որ դուք էլ միշտ այդպէս լսէք ձեր ծնողաց խօսքը եւ նրանց հրամանից դուրս բան չանէք , ” :

Երբ որ թուխսը մէկ տեղ ուտելու բան էր գտնում , առաջ սկսում էր էն մասը մասը անել եւ առանձին առանձին տալիս էր ամէն մէկ վառեկին : Որ կողմը որ թուխսն էր գնում , վառեկներն էլ ձվձվալով վազում էին յետեւից եւ շրջապատում էին իւրեանց մօրը : Շատ էին զարմանում դիւղացիք այս բանիս վրայ . “ մէկ տես է էրէկուայ ձուից դուրս եկած վառեկները համ վազվզում են համ էլ կուտ են ուտում , ” . կրկնում էր ժպտալով իւրաքանչիւրը նրանցից :

Յանկարծ սեաւ ամպը արեգակը ծածկեց բոլորովին . վառեկները նոյնժամայն մտան թուխսի տակը , իրանց մարմինը ցրտից պահպանելու համար : “ Այս տեսարանը է ամենից սրտառուչն , ասացին ներկայ գտնուողները , սրանից էլ լաւ տեսնելու բան կըլինի , մէկ մալիկ արէք քանի դլխներ են երևում թուխսի թեւերի միջից , կամ էն վառեկին որ իրա տեղը չէ հաւանել եւ հիմի ուրիշ տեղ է պտուում , ” :

Ջաղացպանը որ վկայ էր այս տեսարանիս եւ շատ խելօքն էր այն դիւղացուց մէջ , ասաց . “ Ի՛նչ զարմանալի թուշուններ են սրանք . ի հարկ է սրանց մէջ

տեսնուածնք Աստուծոյ աջը . բայց երբ որ պատահում ենք մէկ զարմանալի անսովոր բանի , Նորա խնայտութիւնը եւ ամենակարողութիւնը աւելի է ներգործում մեզ վրայ : Ապա մէկ մտածեցէք ինչ մեծ բաղդաւորութիւն է այս թուխտի համար , որ վառեկները այսպէս վաղ կարողանում են մանդալ եւ ուտել . եթէ այս թուխտը ծիծեռնակի պէս հարկադրուած լինի , կտուցով տանել ճուտերի համար կերակուրը , ի հարկ է շատ դժուար եւ մինչեւ անգամ անկտրելի կը լինէր սորա համար : Աստուած այս վառեկներին այնքան միտք է տուել , որ չհեռանան իւրեանց թուխտից . եթէ սրանք զանազան կողմերն ըլնեն փախչում եւ չըլնեն հնազանդում մօրը , այն ժամանակը միթէ թուխտը կարող էր ժողովել սրանց եւ պահպանել : Սակայն եւ ուղումեմ խմանալ թէ արդեօք այս հաւը ճրտեղից է ստացել այսքան ուժ եւ համբերութիւն , որ կարողանում է այսպիսի խնայտութեամբ պահպանել իւր վառեկներին : Շատ անգամ յիմար եմ կարծել այս թռչունները , իրանց թուխտատութեան համար . երբ որ վաղ անց էի կենում սրանց մոտովը , ի հարկ է առանց վատ դիտաւորութեան , միշտ փախչում էին ինձանից , ինչպէս թշնամուց : Բայց հիմի այս թուխտի բնութիւնը բոլորովին փոխուել է , մինչեւ անգամ չէ վախենում պահպանել իւր որդիերանց թշնամուց էլ : Ես շատ անգամ եմ տեսել , որ երբ հաւերը զանում էին մէկ ցորենի հատիկ եւ երբ մէկը յաղթում էր , խըլում էր ցորենը , այնքան ազահանում էր , որ շուտով հեռանում էր միւսից , որ ինչ է չիլեն ցորենը : Բայց հիմի ընդ հակառակն , հաւը մոռացել է իւր ազահութիւնը , ինքն է կանչում վառեկներին եւ մէկ հատիկ

բան չէ ուտում , մինչեւ նրանք լաւ չը կշտանան ,, :  
Այս միտքը , որով թուխը կառավարում է վա-  
ռեկներին , որով զանում է կերակուր , պահպանում է  
թշնամիներից եւ տաքացնում է նրանց թեւերի տակ ,  
ի հարկ է տուած են սրան Աստուծուց , որ միշտ հոգս է  
քաշում իւր ամենայն արարածների համար : Ուրեմն  
ուժովանանք սիրելի եղբարք իմ եւ մեր գործքերը  
կատարենք քաջութեամբ : Աստուած նախախնամում  
է ամենայն կենդանեաց , եւ մանաւանդ մարդկանց ,  
որոնք նրա համար մեծ նշանակութիւն ունին ամե-  
նայն հաւերից եւ այլ ամենայն անասուններից ,, :

Գ Լ . Գ .

Հիմի մենք բաւականի ձուաներ կունենանք :



Անծանօթ կնիկը , տեսնելով որ գիւղի բնակիչները միշտ եւ անդադար աշխատում են նրա համար եւ կատարում նրա ամենայն հրամանները հնազանդութեամբ , ինքն էլ կամեցաւ մէկ բանով օգնել նրանց խեղճութեանը : Էնդոր համար նա ջոկ պահեց մէկ քանի ձուաներ եւ հաւեր , որոնք նրա համար աւելորդ էին եւ Մարթային ուղարկեց գիւղի ամենայն տան տիկիներին մօտ կանչելու , որ միւս առաւօտը դան ամէնքը նրա մօտ : Ամենեքեան զուքուեցան իւրեանց լաւ շորերով եւ այնպէս ներկայացան անծանօթին :

Ծեր ծառայն բաղումը պատրաստեց սեղանը :

Մարթայն բերեց բաւականի մեծ կողով ձուաներով լիքը : Էնդորնք սպիտակ էին ձունի պէս եւ նրանց վրայ չէր կարելի տեսնել մէկ լաքայ : Գործչապանի կանայքը շատ զարմացան , այնքան ձուաներ տեսնելով : « Փնաք Աստուծոյ . ասաց անծանօթը , հիմի մենք բաւականի ձուաներ կունենանք : Ես կը ցոյց տամ ձեզ այսօր թէ սրանցից ինչ օգուտ կարողենք ատանալ » :

Բաղի մէկ քնջումը կրակ վառեցին եւ վրէն դրին

Ջրով լիքը պղնձ : Անծանօթը առաջ կտարեց մէկ  
ձու , որ ցոյց տայ նրանց թէ եփելուց առաջ ինչ  
թահար է : Կանայք ուրախութեամբ մտիկ էին տալի  
սպիտակոցին , որոյ մէջ լողում էր դեղնոցը : Յետոյ  
հրամայեց անծանօթը ածեն ջրումը եւ փոքր ինչ ե-  
փեն : Սեղանի վրայ պատրաստած էր աղը եւ կտրտած  
հացեր : Առաջ մէկը ինքը կերաւ , որ ցոյց տայ միւս-  
ներին ուտելու կերպը , յետոյ ամէնքը սկսեցին հացի կը-  
տորները թաթախելով ձուի մէջ , ուտել մեծ ախոր-  
ժակով : «Ուրեմն , ասացին ամէնքը միտքերան , ունիա  
համ պատրաստ կերակուր ամանն էլ հետը , հիւանդ-  
ների համար էլ սրանից էժանադին եւ սննդարար կե-  
րակուր ինչ տեղ կղանենք » :

Սրանից յետոյ անծանօթը կտարտեց մէկ քանի ձու-  
աներ , ածաւ հալած իւղում եւ պատրաստեց պատու  
կան ձուածեղ : Մարթայն թէփշերու վրայ զարեց  
փոքր փոքր կտոր եւ տարաւ ամէնքի համար : Այս  
նոր ձեւով շինած կերակուրն էլ շատ ախորժ թուեցաւ  
տանտիկիներուն :

Ի վերջոյ պատրաստեցին երրորդ կերպ կերակուրը  
ձուից : Մերունի կունոն բերում էր սառը եփած ձու-  
աներ մէկ ամանով : Միծաղասէր ծերը դասիդի ա-  
մանը ձեռից վեր գցեց , եւ ձուաները ցրուուեցան դետ-  
նի վրայ էսդէն , էնդէն : Չիւղի կանայքը ահից վեր  
թուան իւրեանց տեղերից , բայց ինչպէս դարմացան .  
ձուաները փոխանակ կտրտուելոյ եւ սպիտակոցի  
թափուելոյ , բոլորովին անվնաս մնացին : Անծանօթը  
վեր կալաւ մէկը եւ հանդարտ սկսեց կպձել . ձուի մէջը  
այնպէս էր դայխացել , որ կարելի էր դանակով լաւ  
կտրտել : Այս բանը նրանք հրաշք կարծեցին : Ան-

ծանօթը այս կերպ ձուփ եփելն էլ սովորացուց սամ-  
սիկիներին :


Ճաշից յետոյ անծանօթը բաժանեց զոնտղներին մէկ  
քանի հաւեր եւ աքլարներ եւ ասաց նրանց , հաւը  
տարին մինչեւ հարիւր ձու է դնում : “ Հարիւր ձու ,  
աղաղակեցին ամէնքը , ինչ հարստութիւն է տըն-  
տեսութեան համար , : Նրեկոյեան բարովելով եւ շը  
նորհակալութիւն անելով անծանօթին , դնացին իւր-  
եանց տները պարգեւներով եւ նոր ուրախալի համբա-  
ւով : Գիւղի բոլոր բնակիչները շատ եւ շատ օրհնում  
էին անծանօթին եւ շնորհակալութիւն էին մատուցա-  
նում Աստուծուն , այս նոր բարերարութեան համար :  
Նրկար ժամանակ հաւերն էին դառել զիւղացուց հա-  
մար խօսակցութեան առարկայ , բարի մարդիկն ամե-  
նայն օր նոր օգուաներ էին տեսնում հաւերից : Հայ-  
րերը շատ էին զարմանում մանաւանդ աքլարների  
կանչելու վրայ . “ տա իմաց է անում մեզ թէ անա լու-  
սացաւ , ասում էին նրանք , շուտով վեր կացէք  
մարդիկ , ժամանակ է գործքի դեալու , : Տանտիկին-  
ները ուրախանում էին հաւերի կռկռալու վրայ : Նրբ  
լսում էին նրանց ձայնը , ուրախութեամբ ասում էին .  
“ ուրեմն կարիքի է իմանալ սուաջուց որ հաւը ձու է  
դրել , եւ գնալ պտուել թանգազին պարգեւը , :  
“ Սրանք կերակրուած են կանաչի կտորներով , խոտով  
եւ ուրիշ զանազան բաներով , որոնցից մենք ոչինչ օ-  
գուտ չունինք : Հազարաւոր սերմերը , որոնք ցանե-  
լու ժամանակը ցրուում կլնեն դէս ու դէն , հիմի  
չէ թէ ի դուր են կորչում , այլ մեծ օգուտ են բերում  
մեզ . հաւերը հաւաքում են եւ նրանց փոխանակ մեզ  
ձուաներ են տալի , , կրկնում էին զիւղի բնակիչքը

համարեան թէ ստե՛նայն օր :

Անձանօթ կնգայ որդիքն էլ նմանապէս էն ժա-  
մանակը լաւ հասկացան ձուաների սրժանաւորութիւ-  
նը . բայց առաջ , երբ որ էնդոնք ունէին առատու-  
թեամբ , ոչինչ բանի տեղ էին համարում : Ի՛նչպէս  
մեծ էր նրանց ուրախութիւնը , երբ առաւօտները  
նախաճաշիկի ( զակուտիայ ) համար ունենում էին կաթը  
և ձուաներ :

Գ Լ . Գ :

Տօն տօնից :



Ահա անց կացաւ տմառը , եկաւ ձմեռը , որ շատ սաստիկ էր այն տարինն այն կողմերում : Քիւղի խրճիթները մէկ քանի անգամ բոլորովին ձիւնով ծածկուեցան , այն սպիտակ պատանքի տակիցը հաղիւ երեւում էին տների կտուրները եւ բուխարները : Չաղացը կանգնեցաւ , ջուրը սաստիկ ջրախց սառած , չը կարողացաւ պահպանել իւր վաղուցուայ հոսանքը , բոլոր ճանապարհները ձիւնից խանգարած էին . ինչ մեծ ուրախութիւն էր այն դիւղացւոց համար դարունքի մօտանալը :

Քիւղացւոց երեխերքը նոյն ժամայն գնացին ուրախացնելու Էդմոնդի եւ Բլանդայի , անձանօթի որդկերանց տարան նրանց համար նոր մանուշակներ :

Եւ երբ որ տափերը ծածկուեցան դանազան ծաղիկներով , երեխերքը կոնէք էին շինում եւ տանում անձանօթի որդկերանց համար : “ Ես անպատճառ , ստում էր անձանօթը , այս բարի երեխանցը պէտք է մէկ բանով փոխարէնը մատուցանեմ : Այ էս դատկի համար խնճոյք կը պատրաստեմ սրանց համար , որովհետեւ այս տօնը պէտք է լինի մանկանց համար

ուրախութեան օր Բայց ի նշով ուարիւացնեմ նրանց ,  
երկիրս ոչինչ չէ բերում , ծառերը դեռ անարտուղ են  
խակ ձուաները են բնութեան առաջին պարզեւները ,  
“ Աղջիկպարոն , ասաց Մարթայն , ամիսս որ ձուա-  
ները զանազան գոյն չունին . սախտակ գոյնը թէպէտ  
չատ լաւ է բայց խնձորի , տանձի կարմիր եւ դեղին  
գոյները աւելի լաւ են եւ գեղեցիկ , ” “ Դու էտուրով  
նոր բան միտս բերիր , ասաց ուրախանալով անծա-  
նօթը . առաջ էստոնք պէտք է եփել , յետոյ ես զա-  
նազան գոյներով կըններկեմ . ի հարկ է ներկած ձուա-  
ները աւելի կը դուր գան զիւրի երեխանց , ”

Այս անծանօթը , որ շատ փորձ առած եւ խելօք  
կնիկ էր , շատ լաւ զիտէր թէ որ խոտերի արմատները  
կարող են ներկ դառնալ : Ներկեց շուտով այլեւայլ  
գոյներով . մէկը կապուտ , միւսը դեղին , կարմիր ,  
կանանչ այլն . մէկ քանի ձուաների վրայ նաեւ զա-  
նազան բարոյական կանոններ էլ զրեց ստանաւորով :  
Էն տարի յարութեան տօնին շատ գեղեցիկ պարզ ե-  
ղանակ էր՝ համարեան կարճի էր ասել այն օրն էր խկական  
օր բնութեան նորոգուելոյ : Արեգակը խառակ երկնից  
կամարի վրայ այնպէս փայլում էր եւ տաքացնում , որ  
ամենայն սրտները ուրախացնում էր , ամենայն բա-  
նը նոր կեանք էր ստացել , տափերը ծածկուած էին  
կանանչ խոտերով եւ շատ տեղեր էլ գեղեցկանում էին  
գոյնզգոյն ծաղկներով :

Անծանօթ կնիկը եւ բոլոր զիւրացիք պնացին եկե-  
ղեցին , որ էն զիւրից բաւականի հեռու էր : Մինչեւ  
ձաշի ժամանակը ամէնքը յետ դառան իւրեանց տը-  
ները : Անծանօթը իւր որդկերանց հասակակից զիւ-  
րացւոց էն օրը իւր տուն էր հրաւիրել . բազում պատ-

բառաւած էր սեղանը . երեխներքը նստտեցան տեղե-  
րը :

Առաջ անծանօթը պարզ կերպով եւ մանրամասնա-  
բար պատմեց երեխանց այն տօնի նշանակութիւնը եւ  
թէ ինչի այն տօնը կոչուումէ տօն տօնից : Յետոյ  
ընդին կաթի մէջ ձու շինած շատ լաւ կերակուր , որ  
երեխներքը մեծ իշտահով կերան : Երբ ուտելը պըր-  
ժան անծանօթը տարտա երեխանց բաղի միւս կողմը  
եւ հրամայեց , որ ստէնքը փոքր փոքր բնէր շինեն  
խտաից : Հրամանքը շուտով կատարեցաւ , բները շի-  
նեցին եւ կարգով դարսեցին մէկ բարձր տեղ :

Երեխներքը կրկին յետ դառան եւ նստտեցան սե-  
ղանի վրայ : Երկրորդ կերակուրն էր ձուածեղ հացով  
շինած . Մարթայն կտրտ'ից եւ ամենքին տուեց փոքր  
փոքր կտոր : Մինչեւ երեխներքը կը վերջացնէին այն  
համեղ կերակրոյ ուտելը , Մարթայն թաղուն գէաց էն  
բների մօտ , եւ ամենքի մէջ մէկ մէկ հասա ձու դրեց ,  
կարմիր , կանաչ , դեղին եւ այլեայլ գոյներով դար-  
դարած :

Ճաշից յետոյ անծանօթը ասաց երեխանց . “ եկէք  
դնանք տեսնենք բները ” : Ամէն բնի մէջ կար մէկ  
մէկ հասա ձու եւ վրէն ոտանաւորներ գրած . ինչքան  
ուրախութեան ձայներ լսուեցան այն գեղեցիկ ձուա-  
ները տեսնելիս : “ Կարմիր ձուաներ , դարմանալով աս-  
աց երեխանցից մէկը , իմ բնումը միայն կարմիր ձու  
կայ ” : “ Իսկ իմ բնումը , ասաց միւս երեխէն , կա-  
պուտ ձու է դրած ” : “ իմ բնումը դեղին է աղաղակեց  
Երրորդը ” : “ Պէտք է ասել , որ ձեր հաւերը ուրիշ տե-  
սակ են , ասաց երեխանցից մէկը , էնդուր որ նշխած  
գեղեցիկ ձուաներ են դնում . սխ ինչպէս ցանկանում

եմ նրանց տեսութեանը „ : “ Ինչ եւս ասում պատաա-  
խանեց Մարթայի փոքր քոյրը , հաւերը այսպիսի  
ձուաներ ո՛նց կըղնեն . շատ կարելի է որ էստեղ  
թախկացած նապաստակն է դրել , էլախտ տեսնա՞ք  
մենք որ գալիս էինք , նա էստեղից փախաւ „ :

Ամենեքեան սկսեցին ծիծաղել . “ հա՛ հա՛ . նապաս-  
տակն է դրել այս գոյնդգոյն ձուաները „ :

Էդուարդը կարդաց իւր ձուի վրայ գրած ոտանա-  
ւորները . երեխէրքը շատ զարմացան նրա կարդալու  
վրա . . . խեղճերը չէին խմանում դեռ թէ կարդալն  
Քնչպէս կլինի :

“ Ահա՛ գեղեցիկ կանոն ատաց անծանօթը . բացէ՛ք ի՛նչ  
է այս ձուի վրա գրած „ :

“ Ամենայն օր հաց ուտելիս ,

“ Աղօթք անելն չզոյ՛ք մախց :

Յետոյ հարցրուց երեխանց . կատարում էք արդե՞ք  
դուք այս կանոնը : Ճաշից յետոյ զորդ որ նրանք  
աղօթք չէին անում , անծանօթը հրամայեց ամենքին  
ձուաները դարսել իրանց տեղերումը եւ աղօթք ա-  
նել :

Աղօթելուց յետոյ իւրաքանչիւր երեխէն ցանկացաւ  
խմանալ թէ իւր ձուի վրայ ի՛նչ է գրած . “ ի՛նչ է գրած  
իմի վրայ „ . “ իմի վրայ ի՛նչ է „ . “ ա՛խ առաջ լմը կարդա  
ցէք „ . “ չէ՛ առաջ առաջ լմը „ . “ գոչեցին միաբերան երե-  
խէրքը „ :

Անծանօթը առաջ հրամայեց նրանց սուս կենալ եւ  
յետոյ մէկ մէկ սկսեց կարդալ այս հետեւեալ կանոն-  
ները :

1. “ Ա՛յ հնազանդ է եւ հանդարտ ,

- կը լինի նա միշտ պարզեւած :
2. “Ո՛վ Աստուծուն կրմոռանայ ,  
Բաղդից , փառքից դուրկ կմնայ :
  3. “Մննադանդ որդւոյ համար ,  
Կայ պատիժներ սաստիկ եւ ծանր :
  4. “Սուա բանն երբէք չի ծածկուի ,  
Ճշմարտութիւնն է դովելի :
  5. “Ծաղկի նման միշտ զեղեցիկ ,  
Պէտքէ պահես դու քո հողիդ :
  6. “Ամենայն օր հայ ուտելիս ,  
Աղօթք անելն չզցէք մտից :
  7. “Ծնողաց մեծ ուրախութիւնն ,  
Է դաւակաց հնադանդութիւն :
  8. “Քո քրանքով աշխատութիւնն ,  
Տանդ համար է երջանկութիւն :
  9. “Նեղ օրը մի յուսահատուիր ,  
Միշտ Աստուծոյ վրայ յոյսդ դիր :
  10. “Չախորդութեան մէջ համբերի ,  
Էնդով հոգւոյդ բարի լինի :

Մեծ ուշադրութեամբ էին լսում երեխէրքը այս խմաստուն խօսքերը . ամէնքը իւրեանց ձուի վրայ գրած ոտանաւորները էնքան կրկնեցին , էնքան աշխատեցին , որ վերջը շուտով անգիր սորվեցան :

Յետոյ անձանօթը հրամայեց ամէն մէկին առանձին առանձին կրկնել իւր ոտանաւորը , արդարեւ այն տասը բոպէի մէջ ամէնքը լաւ անգիր արին իւրեանց դասը . այնպէս որ եթէ նրանց օքմին ասէր ոտանաւորի առաջին շարքը , մնացածը իրանք էին թամամ անում :

Գիւղացիք խնամալով իւրեանց որդիերանց ուրախութեան ձայնը գնացին բազը եւ տեսնելով ածնի գովելի հետեւանքները ասացին զարմանալով . « մեր որդիքը այս կէս սահաթիս մէջ շատ բան սորվեցան , քան թէ մեզ մօտ իւրեանց կեանքումը » : Անծանօթը եկողներին էլ մէկ մէկ հատ նշխած ձուաներ տուեց ասելով . « իմ յիշատակիս համար պահեցէք այս ձուաները , խնդրեմ մի ք ուտի » :

« Ա՛հ թնչեք հրամայում , աղաղակեցին միասին ամէնքը . թնչի կուտենք , էստոնք մեր զլխից լաւ կը պահպանենք , աւելի սրանց վրայ դրած ոտանաւորների համար » : « Եթէ մանաւանդ կը կատարեք էլ այդ կանոնները շատ ուրախալի կլինի ինձ , ասաց անծանօթը ժպտալով » : Յետոյ ասաց նա գիւղացւոց , խընդրեմ այս ձեր որդիերանց ամենայն ժամանակ միտը զցէք այս կանոնները : Այնպէս էլ էլաւ . այն օրից յետոյ երբ հայրը տեսնում էր իւր որդւոյ անհնազանդութիւնը , ասում էր :

« Անհնազանդ որդւոյ համար ,  
Եւ որդին նոյն ժամայն պատասխանում էր .

« Կայ պատիժներ սաստիկ եւ ծանր :

Կամ երբ երեխերանցից մէկը սուտ կը խօսէր ,  
մայրը ասում էր .

« Սուտ բանն երբէք չի ծածկուի ,  
Որդին էլ կը թամամացներ կարծրելով .

« Ճշմարտութիւնն է գովելի :

Ահա այսպիսի յառաջադիմութեամբ էին ծնողները ի գործ դնում այն ոտանաւորները :

Երեխէրքը անձանօթի մօտ դնալով կրկնում էին միշտ . « ան բարերար մեր մենք այն զաակի օրուայ պէս օր մեր օրումը չենք տեսել » : « Մի տրամիք , աւում էր անձանօթը . սիրելիք միշտ ձեր ծնողաց հընազանդ եղէք , այն ոտանաւորների խրատները պահեցէք եւ անպատճառ ամենայն տարի կռնենաք նոյն տօնը եւ նոյն ուրախութեամբ կանցկայնէք : Բայց սրտնք կանոններին չեն հետեւիլ , ես նրանց ինձ մօտ էլ չեմ հրաւիրի , էնդուր որ այն տօնը ուրախութեան տօն է միայն լաւ երեխանց համար » :

Արդարեւ այն գիւղացւոց համարեան բոլոր երեխէրքը թողին իւրեանց վատ վարքը , վատ սովորութիւնները եւ զաակի ուրախութիւնները միշելով եղան ամենահնազանդ եւ ամենաբարեբարուց երեխայք :

Քանի մի ձու , ոսկուց թանազագին :



Անծանօթ կնիկը մէկ օր զատիկից յետոյ սե-  
տաւ մէկ երիտասարդ խր տան կողկով անց կենալիս :  
Խեղճը հաքին ունէր հին գջլտած շորեր , ձեռին էլ բըռ-  
նած ունէր երկար ճանապարհորդի փայտ : Անծանօ-  
թը տեսնելով նրա տխուր դէմքը , կանչեց իրայ մե-  
կէ հարցրուց տրամութեան պատճառը : “ Աւանդ , պա-  
տասխան’ ց երիտասարդը , լալով եւ արտասունք թա-  
փելով , աւանդ ինձ տարաբաղդիս . երեք շաբաթ է ինչ  
ես հօրիցս զրկուել եմ , հայրս գոված կաղատոսներից  
մէկն էր , ես նրան շատ էի սիրում . բայց կրկին ա-  
ւանդ տարաբաղատութեանս : Խեղճ ողորմելի մայրս չու-  
նի կարողութիւն իմ միւս եղբայրների եւ քուրերի պա-  
հելու , էնդուր էլ ես դնում եմ հօրեղբօրս մօտ . նա  
խօստացաւ ինձ սովորցնել իմ հօր արհեստը , որ ժա-  
մանսկով կարողանամ պահել մօրս եւ եղբայրներիս :  
Ահա այժմ դնում եմ հօրեղբօրս մօտ . դեռ ուր է , երբ  
կը համենեմ , քառասուն վերստը անց եմ կացել , էլի  
չատ է մնացել գնալու . շատ հեռու է կենում իմ հօրեղ-  
բայրը , հօրէն այն սարերի էն կողմը . . . . էլի էն  
կողմը , հեռու . . . . շատ հեռու . . . . ” :

Նրխասարդի խօսքերը մեր անծանօթի գութը  
աստիկ շարժեցին , մանաւանդ մտածելով որ իւր տա-  
րարադղութիւնները եւ նրա մօր տարաբարդութիւնները  
չատ նմանութիւն ունին : Տարաւ նրան իւր տուն , հաց  
տուկ կաթը եւ ձուաներ , բաշխեց մէկ քանի մա-  
նէթ ճանապարհին խարջելու եւ մօրը օգնութիւն հաս-  
ցնելու : Կնդմոնդը եւ Բլանդայն էլ շատ խղճացին տա-  
րարադղին : « Ահա , ասաց Բլանդայն , էս կարմիր ձուն  
տանք քոյ քուոր համար եւ խմ կողմանէ շատ բարով  
կանես » : « Ահա էլի ձու , ասաց Կնդմոնդը , էս կա-  
պոյտ ձուն կտանս կղբօրդ եւ կասես , երբ որ նա էլ դայ  
մեղ մօտ , նրան էլ կը կերակրենք կաթնով եւ ձուածե-  
ղով » : Բարի դաւակաց մայրը ժպտաց նրանց խօս-  
քերը լսելով , յետոյ ասաց ճանապարհորդին « ահա այս  
ձուն ուղարկէ քո մօր համար , սրա վրայ գրած ո-  
տանաւորները , շատ եւ շատ կօղնեն նրա դրութեանը :

« Նեղ օրը մի յուսահատուիր ,

« Միշտ Աստուծոյ վրայ յայտ դիր :

Կապիտութիւնով ձուն նրա համար աւելորդ պար-  
դեւ չի վնիկ , այլ էթէ քո մայրը լսէ ոտանաւորների  
ձայնին կրդանէ ճշմարիտ եւ խելական մխիթարութիւն » :

Նրխասարդը շատ շնորհակալութիւն տրեց անծա-  
նօթ կնդան . յետոյ ջաղացական տարաւ այն դիշերը  
նրան իրա տուն եւ պահեց իրա մօտ մինչև լուսանալը :

Ճանապարհորդը դեռ անլուսանալ վեր կացաւ , շա-  
լակեց պարկը հացով լիքը եւ ջաղացականին շնորհա-  
կալութիւն անելուց յետոյ , շարունակեց իւր ճանապար-  
հորդութիւնը :

Մըիդուին ( այսպէս էր կոչուում այն կրխասարդը )  
չտապում էր մեծ մեծ քայլերով , անց էր կենում սա-

րերի տակովը , անտառների միջովը եւ խորը դաշտերովը : Նրբորդ օրը երեկոյեան երբ նա բաւականի մօտ կացել էր իւր հօրեղբօր տանը , մէկ զարհուրելի ձորի մէջ անց կենալիս տեսաւ թամքած ձի , ոսկեայ թատայով զարդարած : Այն ձին մեր երիտասարդին տեսնալով սկսեց խրխնջալ , իբր թէ խնդրում էր այն մարդոյ օգնութիւնը :

« Տէր Աստուած իմ , ազադակեց Ֆրիդոլինը , էս թնչալէս է պատահել , որ այս դեղեցիկ ձին այսպիսի անդունդն է ընկել . երեւի սա մէկ իշխանի ձի պէտք է լինի , շատ կարելի է որ սրտ աէրն էլ հենց էս անդունդի մէջ լինի . դնամ , տնանեմ , դորդ թնչալէս բան է , » : Այս խօսքերն ասելով երկար պտուտում էր նա մէկ այնպիսի ճամապարհ , որով կարողանայ մտնել այն անդունդի մէջ : Թնչալէս էլաւ ներքեւ դնաց , տեսաւ ծառի տակ մէկ պատուական մարդ . միայն նրա դէմքին եւ դրեատին մտիկ տալով կարելի էր իմանալ որ նա էր ասպետ : Նրա աջ կողմը դրած էր գտակը եւ ձախ կողմը մզրախը . բայց նա շատ դեղնած էր , շատ էլ ջահէլ էր եւ խորը քնի մէջ : Ֆրիդոլինը տեսնելով խեղճի ողորմելի դրութիւնը , մօտ կացաւ նրան , բռնեց նրա ձեռից ասելով , « պարոն ասպետ հարկաւոր է արդեօք քեզ օգնութիւն , » :

Անծանօթը աչքերը բաց արաւ , ուրախութեամբ մտիկ տուեց երգասարդին , մի քաշեց եւ բան չկարողանալով ասել , ցոյց տուեց մատով գտակը : Ֆրիդոլինը խնայաւ , որ ջուր է հարկաւոր նրան , վեր սուաւ գտակը , գնաց մէկ օղբիւր գտաւ , ջուր հանեց էնտեղից եւ տարաւ անծանօթի համար : Անծանօթը ազահութեամբ խմեց ջուրը , եւ սակաւ առ սակաւ ուժ լս-

տանալով ասաց . « Փնօք Աստուծոյ նախ եւ առաջ  
եւ ապա շնորհակալեմ քեզանից նվ երխտասարդ դու .  
ինքն Աստուած ուղարկեց քեզ ինձ մահուանից աղա-  
տելու : Բայց շատ քաղցած եմ , չես կարող արդեօք  
ինձ համար փոքր հացի կտոր ձարել , » :

« Ախ , ախսն , ասաց Յւլիոյլինը , եթէ ես գի-  
տացել էի այս բանը ի վաղուց լաւ կլինէր , իմ հացը եւ  
պանիրը չէի ուտի . . . . բայց համբերեցէք , աղա-  
ղակեց նա յանկարծ ուրախութեամբ . ես ներկած  
ձուաններ ունիմ , անձ լաւ ուժ տուող եւ սննդարար  
կերակուր » :

Երխտասարդը նստեցաւ իշխանի մօտ , պարկից հա-  
նեց ձուաները , մէջը շուտով կճպեց , կարտեց եւ փո-  
քրր փոքր կտոր սալիս էր սապեալն : Նքթեալ եւ  
բոլորով ին անդօրացած իշխանը ձուով եւ ջրով փոքր  
չնչի եկաւ :

Յրիոյլինը ուզում էր կտորել երրորդ ձուն , բայց  
ասպետը ասաց . « բաւական է , լաւ չէ երկար քաղ-  
ցածութիւնից յետոյ շատ ուտել : Իմ օրումս ոչ մէկ  
կերակուր ինձ այսպէս քաղցր եւ անուշչէ թուել , ինչ-  
պէս իմ այս օրուայ թաղաւորական սեղանը : Փնօք  
Աստուծոյ եւ փոքր ուժաւորուեցայ , շարունակեց  
ասպետը ոտի վրայ կանգնելով . եթէ դու չէիր եկել ,  
ինձ օգնութիւն չէիր հասցրել , ես անպատճառ այս  
գիշեր կըմեռնէի , » :

Յրիոյլինը անդղչելով առջիւր դարսած զէնքը եւ  
չորերը՝ « ասաց նվ աղնիւ ասպետ . ինչտեղից եք եկել  
այս տեղ , այս խորը անդունդի մէջ ձեր ձիու հետ ինչ-  
եք շինում , » :

— « Չէ եւ ասպետ չեմ , պատասխանեց նա , եւ հա-

սարակ զինակիր եմ միայն (\*), ահա քանի ժամանակ է իմ զլխաւորիս գործոյ մասին եմ ման գալի այս կողմերումը : Անտառումը ճանապարհս կորցրի , գիշերն էլ վրայ հասաւ ինձ եւ յանկարծ սաստիկ մթան մէջ ոչինչ չտեսնելով , ընկայ ձիովս այս անդունդի մէջ ,»

«Իմ ձիս շատ ուժով է եւ էնդուր էլ ոչինչ վնաս չըկրեց . բայց ես ոտս կոտրեցի այնպէս սաստիկ , որ չեմ կարողանում ոչ ման գալ եւ ոչ նստել ձիուս վրայ . ճշմարիտն ստեմ , հիմի որ մտիկ եմ տալի այս անդունդի խորութեանը , դարմանում եմ թէ ինչպէս էլաւ , որ բողորովին չմեռանք այս տեղ ընկնելով . բայց զիսի Աստուծոյ տմենակարողութիւնիցն է եւ Նրա անպատմելի ողորմութիւնից : Ես կապեցի իմ եարէն , բայց շատ էր նեղացնում ինձ կոտրած ոտս , կսկծից սկսեց ինձ դողայնել . այն գիշերը ես կարծում էի թէ պէտք է մեռնիմ , մեռնելուց չպէտքէ իհարկ է վախենալ , բայց այսպիսի անդունդի մէջ , անտէր եւ տիրական մեռնիլը շատ դժուար էի համարում : Բայց դու , ով երիտասարդ , եկար ինձ մօտ , պահապան հրեշտակի պէս սղատեցիր ինձ վտանդից : Ասա խնդրեմ արդեօք ի՞նչ հանդամանքներդ հարկադրեցին քեզ այս դարհուրելի անդունդը մտնիլ ,»

Տրիդովինը պատմեց իւր վրայ անց կացածները . զինակիրը մեծ ուրախութեամբ էր լսում իւր ազատողին , ժամանակ ժամանակ ասելով . « այն ներկած

---

(\*) Միջին դարերում իրաքանչիւր ասպետ ունենում էր իրա մօտ իրրեւ ծառայ քանի մի զինակիրներ : Եւ այնպիսի կանոն ունէին իւրեանց մէջ , որ մինչեւ իշխանի որդին չստվորի հնազանդիլ այլոց , չպէտք է լինի այլոց հրամայող :

ճուաները շատ դեղեցիկ էին , մտիկ էր առլիս դեանի վրայ ածած կճեպներին . ես իմ օրում այսպիսի ճուաներ չեմ տեսել : Խնդրեմ ցոյց տուր ինձ պահած ճուան : Յրիգուիները պարկից հանեց ճուան տուեց ղինակրին եւ սրտամեց թէ ինչպէս է ստացել այն ճուան : Չինակիրը մեծ մտադրութեամբ մտիկ էր տալի ճուան եւ արտասուանքները սկսեցին յանկարծ թափիլ նրա աչքերիցը : «Աստուած իմ , ասացնա , այս ճուանի վրայ դրած խօսքերը են ինձ համար մխիթարիչ ճշմարտութիւններ , որ ես այս օրերում փորձեցի .

Նեղ օրը մի յուսահատուիր .

Միշտ Աստուծոյ վրայ յոյսդ դիր :

Հնա , ես փորձեցի այս բանը : Այս անդունդից ես աղօթքներ էի վեր առաքում Աստուծոյ մօտ օղնութեան համար . եւնա կատարեց իմ խնդիրքը :

Դու տէր Աստուած օրհնէ Քո երկնային օրհնութեամբք այն երեխանց , որոնք տուին սրան այս ճուաները , ի հարկ է նրանք ի նչ կմտածէին թէ դու սիրելի երիտասարդ այն չարդեւած ճուաներով մէկ մարդ մահուանից կազատես : Օրհնէ նմանապէս տէր Աստուած այն առաքինի կնդան , որ այս ճուանի վրայ գրել է զարմանալի եւ խնայողան կանոն . . . . : Տներ ինձ այդ ճուան , շարունակեց նա , ես այդ լաւ կը պահեմ , որ միշտ աչքիս սուաջ ունենամ այդ թանգագին կանոնը : Էստուր փոխարէն քեզ փող կտամ տեսելով , հանեց մէկ քսակ եւ խրաքանչիւր ճուան համար մէկ մէկ հատ ոսկի տուեց , բայց այն չկտարածի համար տուեց երկու ոսկի : Յրիգուիներ թէպէտ չէր համաձայնում երկար , բայց ղինակրի աղաչանքները

հարկադրեցին վերջապէս համաձայնիլ :

“ Բայց , ասաց զինակիրը վերեւ մտիկ տալով , դիշերն էլի կրկին մօտ կանուժ է . տեսնում ես սարերի վրայ յեափն ճառագայթներն են փայլում արեղակի . պէտք է այս տեղից դուրս գնալու վրայ մտածենք . արի խնդրեմ , օգնէ ինձ ձիու վրայ նստեմ . այն ճանապարհը , որով դու եկար ինձ մօտ կարելի է աղասէ մեզ այս տեղից . ” :

Փրիդոլինը նստեցրուց նրան ձիու վրայ , բռնեց լկամը . ձիու առաջն ընկաւ եւ սկսեց գնալ շտապելով : Շատ մանգալուց եւ չաչարուելուց յետոյ դուրս եկան այն անդունդից : Ի՞նչպիսի ուրախութիւն զգաց զինակիրը իւր սրտի մէջ , երբ որ դուրս եկաւ այն տեղից , որ իրա գերեզման էր համարում : Ամենայն ծառը , ամենայն քարը եւ ամէն մէկ շնչին բանը նրա երեսին անպատմելի ուրախութեան ժպիտներ էին ծագում : “ Մենք կարծեմ որ այսօր հասնենք իմ հօրեղբօր տանը , ասաց Փրիդոլինը . ես շուտ շուտ եմ ման դալի , քո ձին էլ շատ ուժով է եւ արագադրնաց . իմ հօր եղբայրը , բարի մարդ է նա ձեզ մեծ ուրախութեամբ կընդունի . ” :

Նրանք դեռ չըմթնացած հասան հօր եղբօր մօտ . որ մեծ ուրախութեամբ եւ սիրով ընդունեց նրկուսին էլ : Գովեց նա Փրիդոլինին այն գովելի գործքի համար . բայց Փրիդոլինը ասաց նրան “ իմ խղճմտանքը ինձ տանջում է . ես իմ մօր եւ եղբարցս ձուաները ուրիշին տուի , եւ չկատարեցի անձանօթ կնգայ հրամանը : Ի՞նչ ես ասում , պատասխանեց հօր եղբայրը . չեմ գիտի քեզ ի՞նչ է պատահել , դու դիժի կարմիր , կանանչ եւ կապուտ ձուաների վրայ ես խօսում , եւ

միթէ մէկ դանադանութիւն կայ նրանց մէջ եւ մեր  
տանու ձուաների մէջ . թէպէտ էնդոնք ոսկեայ ձու-  
աներ լինէին էլի չէիր կարող այսպիսի լաւ բանի հա-  
մար պէտք ածել : Այն ձուաներովը դու կենդանա-  
ցրել ես այս ղինակրին եւ քեզ համար բարեգործու-  
թեան պատճառ են դառել : Գու նոյն գործն ես արել ,  
զոր ինչ արաւ բարերար Սամարացին , :

Չինակիրը ցոյց տուեց այն կաղատոսին գեղեցիկ  
ձուն : “ Արդարեւ պատուական խմբին է , ասաց կա-  
ղատուր խր եղբօր որդուն , թող այս հիւանդն ունե-  
նայ , էնդուր որ քո մօրը ոսկին աւելի կօզնի քան  
թէ այս ձուն : Տեսնում ես , ասաց հօրեղբայրը այս  
ձուի մակագիրը նմանապէս միսիթարիչ էլաւ քո մօր  
համար էլ : Այս բանը թէ ,

Նեղ օրը մի յուսահատուիր

Միշտ Աստուծոյ վրայ յոյսդ դիր :

Եստ խնամտուն խօսք է եւ թանգադին է աշխարհի  
ամենայն հարստութիւններից . ուրեմն աշխատեցէք  
միշտ պահպանել , եւ ամէն նեղ օրերում միաներդ բե-  
րէք եւ սրա հրամայածը կատարէք , :

Չինակիրը բաւականի ժամանակ մնաց այն բարի  
կաղատոսի տանը , բոլոր ընտանիքը աշխատում էր նը-  
րա եարէն լաւացնելու . համար եւ մինչեւ լաւ կատա-  
րեալ չառողջացաւ նա , չթողին իրանց տանից ուր-  
ուքմին դնալ :

Ոսկուով եւ մարգարտով զարդարած ձու :



Գարունը եւ ամառը զիւղի մէջ անց կացան առանց նշանաւոր փոփոխութեանց , գործլապանները վարում էին գետինը եւ գնում էին անտառը գործլի այրելու համար , նրանց կանայքը պարապում էին տրնտեսութեամբ , թուխս էին նստեցնում , հաւերը շատացնում էին , իսկ երեխէքը անդադար հարցնում էին էլի շո՞ւտ կգայ արդեօք Զատիկը : Գիւղացիք անց էին կացնում իւրեանց օրերը բաղդաւորութեան մէջ , բայց անձանօթ կնիկը շատ տրտմած էր . նրա հաւատարիս ծառայն հիւանդացաւ : Ուրեմն խեղճը էլ չէր կարող նրան ուղարկել Նեոու աշխարհներ : Անձանօթը շատ աղի աղի տրտատունքներ էր թափում կունոյխ գողենքի մօտ :

Այն ժամանակը մէկ ուրիշ նոր անցք պատահեցաւ զիւղի մէջ , որը որ շատ եւ շատ շփոթեց եւ վախ՛նցրուց մեր անձանօթին :

Մէկ առաւօտ գործլապանները անտառից յետ դառնալիս պատմեցին բոլոր զիւղացւոց , թէ անցեալ զիշերը երբ մենք ասում է հանդարտ նստած էինք անտառում , մեզ մօտ եկան չորս անձանօթ մարդիկ , որոնք գլխին զրած ունէին երկաթեայ գտակներ եւ

Նրանց շորերն էլ երկաթից էր : Այն մարդիկն էին Պոն  
— Շրոֆէնէք կոմսի ուղարկածները : Նրանք հարց ու  
փորձ էին արել գործընկերներին այն կողմերի մասին :

Ջաղացականը շուտով գնաց անձանօթ կնդայ մօտ  
անցքը պատմելու : Խեղճ կնիկը դեղնեցաւ եւ գողղը-  
ղաց երբ խնայաւ Պոն Շրոֆէնէք կոմսի անունը :  
« Ա՛խ Աստուած իմ , նա իմ չարագոյն թշնամին է ,  
նա անպատճառ եկած կլինի ինձ սպանելու : Նրանի  
գործընկերները ինձ համար ոչինչ չէին ասել . . . » :

Ջաղացականը հաւատացրուց որ օչով բան չէ ասել  
նորա վրայ :

« Միրելի Օւլալդ , սասաց անձանօթը Ջաղացականին .  
ինչ ես եկել եմ ձեր դիւղը քեզ կարծել եմ պատուական  
եւ հաւատարիմ մարդ , էնդուր էլ քեզ մաւա եմ գնում  
եւ ուղում եմ պատմել իմ դատը վ իճակը :

« Ես Բողալինայն եմ , Բուրդուշողիոյ իշխանի աղջիկը :  
Երկու աղնիւ կոմսեր յայտնեցին իմ հօրս իւրեանց ցան-  
կութիւնը ինձ վրայ պսակուելոյ , Քաննո Պոն — Շը-  
րօֆէնէքը եւ Արնո Պոն — Ալմդենբուրգը , Քաննոն  
էր շատ հարուստ եւ քաջ իշխան . նա ունէր շատ  
բերդեր , պալատներ եւ մեծ զօրք , բայց ըստ ամենայ-  
նի շատ գոռոզ եւ վատաբարոյ մարդ էր : Արնոն ընդ  
հակառակն էր աղնիւ եւ քաջ սասկեւ . բայց փողի  
կողմանէ շատ աղքատ էր , հօրից նա ստացաւ ի ժա-  
ռանգութիւն մէկ հին մեծ բերդ , նրան իմ հօր հա-  
մաձայնութեամբ տուի իմ սիրտս . նրա հետ պսակու-  
եցայ եւ հարստացրի նրան իմ բաժինքովը : Մենք  
բաղդաւորութեան մէջ էինք շատ , եւ օրեց օր աւե-  
լանում էր մեր հարստութիւնն էլ եւ մեր անունն էլ  
հրատարակուում էր ամենայն տեղ եւ հռչակուում : Բայց

Քանոն շատ թշնամացաւ մեղ հետ , նա թաքուն էր պահում իւր սրախ մէջ ջիղրը : Կս մարդը էն ժամանակ հարկադրուեցաւ գնալ Ապսեր հետ պատերազմ : Քանոն էլ պէտք էր ուղեկից լինիլ Ապսեր , բայց զանազան պատճառներ էր ցոյց տալի , թէ ինչ է որ մնայ իրա աշխարհքումը : Եւ այսպէս երբ որ Արնոն պահպանում էր իւր հայրենիքը թշնամեացմէն , անհաւատարիմ եւ չար Քանոն զօրքով եկաւ մեր աշխարհքը , սկսեց այրել , սպանել , թալանել : Ես ոչինչ ձար չունենալով ազատութեանս համար , փախայ իմ սիրելի որդկերանցովս ծածուկ : Առնոն էր իմ պահապանը այն իմ փոանդաւոր ճանապարհորդութեանս մէջ , ամենայն ըսպէ մտածում էի թէ էս է կզան եւ կբռնեն ինձ : Աերջը հասայ ես ձեր դիւղը եւ դտայ խաղաղ եւ հանդարտ փախստարան եւ ապահով ապաստանարան : Ես ուզում եմ մինչեւ իմ մարդու յետ դառնալը մնալ այս տեղ : Առնոյին ես էի ուղարկում իմ հայրենիքը էնտեղի համբաւները խմանալու համար , բայց նա միշտ տրամութեան լուր էր բերում . Քանոն էլի տիրապետում է իմ հայրենիքի վրայ : Ահա արդեն սաղ տարի է , որ Առնոն առողջ չէ եւ քանի ժամանակ է ոչինչ լուր չունիմ իմ հայրենիքիցս , իմ սիրելի մադուցը : Մտտուած իմ , շատ կարելի է , որ նա հիմայ թըշնամու ձեռի տակը լինի : Շատ կարելի է , որ Քանոն է եկել իրա մարդկերանցով այս կողմերը եւ դիտէ էլ արդեն իմ թագստեան տեղը . . . անի այն ժամանակը ինչ կլինի իմ հաղը : Մահը հազարապատիկ լաւ կը համարիմ , նրա իշխանութեան տակ ընկնելուց ,» :

“ Աւրեմն սիրելի Օլվալդ խնաց արն ամենայն դորձապաններին . դիտեմ ամենքը պատրաստ են ինձ

համար իրանց զլուխը դօհելու , բայց էլի ասան որ  
չմտանեն ինձ , — « Չեզ մտանել . . . ասաց ջա-  
ղաշարանը . նրանց բողոքեցունց կողմանէ եւ կողա-  
տասխանեմ , ձեզ մնասելու համար այն կոմսը առաջ  
պէտք է անց կենայ մեր բողոքեցունց մարմիններու վրայ :  
Էտուր մասին դուք միամիտ կացէք իշխանուհի , » :

Բայց ըստ ամենայնի անձանօթը շատ տխուր եւ  
անմխիթար կեանք էր վարում : Նա սհուց չէր հա-  
մարձակուում տանից դուրս գնալ եւ երեխանցն էլ  
համանապէս արգելում էր բակումը խաղալ :

Սրբ վերջապէս ամենայն բանը հանդարտացաւ  
եւ օչով էլ անձանօթ մարդկերանց վրայ չէր խօսում ,  
անձանօթը կամեցաւ գնալ դրօսանայ համար . օրը  
շատ դեղեցիկ էր եւ օղը պարզ : Նրանց տանից մէկ  
քանի հարիւր քայլ հեռու կար դիւզի եկեղեցին , փայ-  
տից շինած : Այն եկեղեցւոյ մէջ կար մէկ պատկեր  
« փախուստն յՅիսուսու » , որը որ Առնոն էր  
բերել իշխանուհւոյ մխիթարելու : Եկեղեցւոյ միւս  
կողմը կային ժայռեր ծառերով զարդարած , ճանա-  
պարհը գնում էր ծառերի միջովը . լաւ ուրախալի  
ճանապարհներից մէկն էր :

Անձանօթը մտաւ եկեղեցին , չոքեցաւ իւր երե-  
խանցով Աստուածածնայ պատկերի սուաջը , տեսնե-  
լով մեծ համառութիւն իւր փախուստի եւ Աստուածա-  
մօր փախուստի մէջ , շատ շարժեցաւ նրա սիրտը եւ  
շատ արտառնքներ թափեց պատկերի առաջ : Աղօթք  
անելուց յետոյ անձանօթը դուրս եկաւ եկեղեցուց եւ  
իւր երեխանցով սկսեց դրօսնուլ անտառում : Արամաց  
կամաց եւ սակաւ առ սակաւ հեռացան նրանք եկե-  
ղեցուց : Յանկարծ մէկ ծառի տակ անձանօթը տեսաւ

ախտազնաց . որ ձեռին բռնած ունէր երկար սպի-  
տակ վայտ , նրա գտակը զարդարած էր փայլուն  
խեցեմորթներով : Անծանօթ կնիկը առաջ շատ վա-  
խեցաւ նրան անանելով , բայց ախտազնացը մօտ կա-  
ցաւ նրան , գլուխը վէր բերեց եւ սկսեց խօսակցութիւն  
նրա հետ :

« Մի վախենաք , ասաց վերջապէս ճանապարհոր-  
դը . մի կարծէք թէ ես ձեզ համար բողբոլիմ ան-  
ծանօթ մարդ եմ : Գուք Բուրդունդիոյ Բողալինդայն  
եք , գիտեմ ինչ զարհուրելի տարաբաղդութիւնն է հար-  
կադրել ձեզ այս կողմերը գալ : Ձեր մարդը , որից քա-  
նի ժամանակ է բաժնուած եք , եւ որին շատ կարելի  
է մոռացել ընէք ինձ երեք ասորի է ճանանչում է :  
Ձեր այս տեղ դալուց յետոյ շատ բաներ է անցկացել .  
շատ թշուառութիւններ եւ չարչարանքներ է փորձել ձեր  
սիրելի մարդը : Նթէ ուզում էք հիմի ասեմ ձեզ նոր  
լուր , ահա , մեր երկրում խաղաղութիւն է , ձեր մար-  
դը պատերազմից բաղդաւորութեամբ յետ դառաւ , եւ  
մէկ քանի օրում տիրեց իւր երկիրների վրայ . դուրս  
արաւ չար եւ դռուղ Գանային , որ առաջ այս կողմի  
տարերումն էր թախ կենում , յետոյ հարկադրուեց  
այս կողմերիցն էլ հեռանալ : Ամենայն բանով բաղ-  
դաւոր Արնոյի միակ ցանկութիւնն է իւր սիրելի եւ  
կարօտեալ կնոջ գանկը :

« Ա՛հ Աստուած իմ Աստուած , աղաղակեց Բողա-  
լինդայն , ահա ուրախալի լուր . . . . ահա ինձ կեն-  
դանացնող համբաւ . . . . փառք քեզ Աստուած ,  
փառք քեզ ասելով արտասուալի աչքերով ընկաւ  
դեմնի վրայ աղօթք անելով : Հա , շարունակեց կը-  
նիկը , Գու լսեցիր իմ աղօթքը , կատարեցիր իմ բո-

լոր խնդիրքներս . շնորհակալ եմ Քեղանից սճ ո-  
ղորմած Տէր իմ այս ամենայն բարերարութեանցդ  
համար . . . . . , Արնո՛ , Արնո՛ . երբ կըհասնի այն  
բուպէն , որ ես տեսնեմ քեզ եւ յանձնեմ քեզ քո սի-  
րելի որդկերանցը , որոնցից առաջին անգամ կըլսես  
“ սիրելի հայր , ” անուշը :

— “ Դուք կարծում եք , ասաց կնիկը ուխտագնա-  
ցին , թէ ես իմ մարդուն բողբոլին մոռացել եմ . . .  
եկէք ինձ մօտ սիրելի որդիք իմ , ասաց կնիկը էջ-  
մոնդին եւ Բլանդային , որոնք զարմանալով մտիկ էին  
տալիս անձանօթ մարդուն , շուտով եկէք ինձ մօտ :

Երեխերքը գնացին իւրեանց մօր մօտ :

“ Էդմոնդ , ասաց մայրը իւր որդւոյն համբուրելով ,  
ապա՛ սիրելի իմ մէկ կրկնիւր այն սղօթքը , որ մենք  
ամենայն առաւօտ ասումենք ձեր հօր վերադառնա-  
լու համար , ” : Էդմոնդը չոքեցաւ , ձեռները խաչածեւ  
դարանց սրտի վրայ , բարձրացրուց աչքերը դէպ ի  
երկինքը եւ խորն զգացողութեամբ ասաց . “ Հայր  
մեր , որ Երկնքումն ես բնակում . ողորմեա՛ մեզ  
տարարազդ որդկերանցս : Դու ազատէ՛ իմ հօրս թըշ-  
նամու ձեռից . խօստանում ենք լինիլ բարերաչա եւ  
բարերարուոյ , նրա ծնողական սիրտը ուրախացնելու :  
Ո՛հ , ողորմած Տէր , լսիր եւ կատարիր մեր խնդրու-  
ածքը , ” :

“ Իսկ դու Բլանդայ , ասաց մայրը իւր գեղեցիկ  
աղջկան . հիմի՛ դու ասա՛ մեր երեկոյեան սղօթքը ձեր  
հօր համար , ” : Բլանդայն իւր եղբօր պէս ձեռները  
կցեց , չոքեց գիանի վրայ եւ ցածր ձայնով ասաց .  
“ Հայր մեր , որ երկնքումն ես բնակում . հիմա քը-  
նելու համար գնալու ժամանակը սղաչում ենք մեր

հօր ազատման համար : Տ՛ուր Գու նրան հանդարտ  
քուն , եւ Քո պահապան հրեշտակներովդ պահպանի՛ր  
նրան ամենայն վտանգներից : Մեր սիրելի մօրն էլ  
տու՛ր հանդարտ գիշեր , որ կարողանայ տանել իւր  
անտանելի վիշտը : Այս գիշերը Տէր Աստուած աղա-  
չում ենք , որ լինի վերջին գիշեր մեր որբութեան .  
Գու հասցնու մեզ շուտով այն օրին , երբ կլինի ցան-  
կալի օր մեր միմեանց տեսութեան ,, :

“ Ամէն ,, գոչեց մայրը , ձեռները բարձրացնելով  
դէպ ի երկինքը եւ առուի նման արտասուենք թափե-  
լով :

Այս տեսարանիս ժամանակը , ճանապարհորդը չը-  
կարողացաւ բռնել լացը . մէկ բոպէի մէջ հանեց ուխ-  
տագնացի շորերը , վեր կալաւ միրուքը , սպիտակ մա-  
ղերը , դէն գցեց փայտը եւ այն ժամանակ ո՛չ թէ ծեր  
ուխտագնացին նմանեցաւ , այլ գեղեցիկ Չահել ասպե-  
տի , ոսկուով եւ արծաթեայ շորերով զարդարած :

Նա շուտով փաթաթուեց կնգան եւ երեխանցը , յա-  
մենայն սրտէ գոչելով . “ Ա՛ն Բողալինդա խմ սիրելի  
կնիկ . էղմնեդ , Բլանդայ խմ կարօտեալ զաւակունք ,, :

Բողալինդայն ուրախութիւնից շշկլած մնաց , չէր ի-  
մանում ի՞նչ անի . երեխէրքը կարծեցին թէ ուխտա-  
գնացը դառաւ Նրկնային բնակիչ , այնպէս գեղեցիկ  
երեւեց նրանց հայրը : Եւ յիրաւի Արնոն էր ամենայն  
ասպետներից ամենագեղեցիկը եւ քաջը : Հայրը , մայրը  
եւ որդիքը քաղցր խօսակցութեան մէջ չվարավուրդ ա-  
րին բոլորովին թէ ժամանակը ինչպէս շուտով անցկա-  
ցաւ : Արնոն ասաց ընտանեաց . ես եկել եմ այս կողմե-  
րը մեծ զօրքով , բայց որովհետեւ վատ ճանապարհ-  
ներ էր , զօրքս անտատի այն կողմը թողի եւ ես ուխ-

տաղնացի շորերով եկաց այս կողմերը , որ էսպէսով շուտով խմանամ իմ ընտանեաց առողջութիւնը եւ տարաբաղդութիւնները : Բողալինդայ շատ կամեցաւ խմանալ թէ նա ինչպէս է գտել ապաստանարանը :

« Ա՛հ Բողալինա իմ սիրելի , պատասխանեց նա , մեր միմեանց տեսութեան զլխասուր պատճառն դու ես . քո հոգսը որ դու ունեցել ես այս կողմի զիւղացւոց վերայ Աստուած անպարզեւ չկամեցաւ թողնել , այլ քո սիրելի մարդուն էլի քեզ դարձրուց : Առանց քո մեծամեծ գործքերի , որ դու արել ես տմենեցուն մենք չէինք կարող տեսնել միմեանց . էնդուր որ քո թշնամիքը շըրջապատել էին այս կողմերը , եւ դու անպատճառ կընկնէիր նրանց ձեռքը : Բայց երբ ես եկայ այս կողմերը իմ բաղմաթիւ զօրքով , Քանոն հեռացաւ այս տեղից ահուց : Մտիկ տուր շարունակեց նա , ցոյց տալով ներկած ձուն այս մակապրով .

Նեղ օրը մի յուսահաստուիր

Միշտ Աստուծոյ վրայ յոյսդ դիր :

Այս ձուն իբր թէ Աստուծոյ ձեռին էր գործիք մեր կրկին տեսութեան :

« Ես արդեն քանի ժամանակ է ամենայն կողմերը ուղարկել եմ մարդիկ քո փախստարանը գտնելու համար . բայց ի դուր : Վերջը իմ ղինակիր Էկբերդը մէկ օր յետ դառաւ իւր ճանապարհորդութիւնից . ես կարծում էի թէ նա ընկել է թշնամու ձեռքը : Բայց չէ . նա մէկ խոր անդունդն էր ընկել , եւ քաղցածութիւնից կըմեռնէր անպատճառ , եթէ մէկ երիտասարդ չէր պատահել նրան եւ չէր աղատել փորձանքից : Այն անձանօթ երիտասարդը յիշատակի համար տուել է նը-

րան ահա այս ձուն ամենապատուական մակադրով  
զարդարած : Բայց տես թէ որքան զարմացայ ես երբ  
ճանաչեցի քոյ ձեռագիրը : Մենք խսկոյն նստո-  
տեցանք ձիաներու վրայ եւ գնացինք այն երիտա-  
սարդի հօր եղբօր բնակարանը . նա ցոյց տուեց մեզ  
ձեր տան ճանապարհը : Ուրեմն տեսնում ես դու ,  
եթէ գիւղի երեխանց համար տօնին ձուաներ չէիր  
բաժանել , եթէ դու չէիր աշխատել նրանց բարքը  
եւ վարքը ուղղելոյ կողմանէ եւ վերջապէս եթէ դուք  
սիրելի էղմունդ եւ խմ գեղեցիկ Բլանդայ , եթէ չէիք  
խղճացել այն անծանօթ երիտասարդին եւ չէիք տուել  
նրան ներկած ձուաներ , չէինք արժանանալ այս եր-  
ջանիկ բոպէին : Ամենայն բարերարութիւնը , որքան  
եւ փոքր լինի , բայց թէ իստակ սրտից է ծագած  
անպատճառ ունի նշանակուած եւ կնային օրհնութիւն .  
այն է սերմն . . . . . որ տալիս է առատ պտուղ-  
ներ : Աստուած մեր բարեգործութեան փոխարենը  
տալիս է եւ այս աշխարհումը : Ուրեմն լաւ միտներդ  
պահեցէք այս սիրելի սրդիք խմ , ողորմութիւն արէք  
ամենեցուն ձեր կարողութեանց դէօրայ , նմանեցէք  
ամենայն բանով ձեր բարի մօրը , ամենքին օգնեցէք  
եւ զթասիրտ եղէք զէպ ի ամենայն պակասաւորները  
եւ խեղճերը եւ ձեզ էլ կօգնի Աստուած : Տեսա՞ք հիմի  
այս ճշմարտութիւնը որ գրած է ձուի կճեպի վրայ ,  
տեսա՞ք որ եւ գործով կատարեցաւ , ես կըհրամայեմ  
այս թանգագին ձուն զարդարել ոսկւով եւ մարգար-  
տով եւ կախ անել մեր պալատի եկեղեցւոյ բեմի ա-  
ռաջ :

“Բայց սիրելի խմ գիշերը մօտ կացաւ , արի գնանք  
ձեր բնակարանը : Տանը նոր ուրախութիւն էր սպա-

առւմ նրանց , զինապիր Էկբէրտը եւ Ֆրիդոլինը այն տեղ  
էին եւ խօսում էին Կունոյի հետ , որը որ խմանալով  
ասպետի վերադառնալը համարեան թէ բոլորովին  
առողջօրացաւ : Առաջ առաջ դէմ գնաց Արնոյին Ֆրի-  
դոլինը եւ շնորհաւորեց նրան ուրախալի բաղդաւորու-  
թիւնը . յետոյ առաջ գնաց Էկբէրտը , խոնարհու-  
թեամբ զլուխ վէր բերեց նրանց ասելով , թո՛ղ տուէք  
ինձ ողորմած Կոմսուհի համբուրել ձեր բարեբարող  
ձեռը , որով Աստուած երկարեց իմ կեանքը , :

Արնոն փաթաթուեց ձեր Կունոյին եւ համբուրեց , նա  
էր իւր ամենայն ծառաներից հաւատարիմը . յետոյ  
չատ շնորհակալութիւն արեց Չաղացպանին եւ բոլոր  
զիւղացւոց , որոնք ժողովուել էին բազմութեամբ :

Միւս օրը մտաւ գիւղը Արնոյի զօրքը ուրախու-  
թեան երգերով եւ իւրեանց իշխանին փառաբանելով .  
Եկողներն էին ասպետներ , զինակիրներ ոմանք ոտով ,  
ոմանք ձիաներով : Ամենքը զլուխ էին վէր բերում իշխա-  
նուհոյն խորին ցնծութիւն յայտնելով . այն օրը անպատ-  
մելի ուրախութիւն էր բոլոր զիւղացւոց համար , նրանք  
իւրեանց օրում չէին տեսել այնքան : բազմութիւն ,  
այնքան հարստութիւն եւ այնպիսի ուրախութիւն :

Արնոն կացաւ այն գիւղի մէջ մէկ քանի օր եւ  
այն տեղից հեռանալու օրը մեծ խնձոյք պատրաստեց  
բոլոր զիւղացւոց համար : Չաղացպանը եւ գործչա-  
պանները նստած էին ասպետների եւ զինակիրների հետ  
սեղանի վրայ եւ մեծ ուրախութիւն էին անում :

Խնձոյքի վերջը Արնոն բոլոր զիւղացւոց բաժանեց  
թանգաղին պարզեւներ եւ յետոյ ասաց գործչապան-  
ների կնգդերանցը . « սիրելիք իմ , իմ կնոջ եւ որդկե-  
րանց ձեզ մօտ վիսկը շնուանալոյ համար , խօստա-

նում եւս ամենայն տարի ձեզ ամենքիդ համար ուղարկել ներկած ձուաներ,» : — « Ես էլ, ասաց Կոմսուհին, այդ ձուաներ բաժանելու ծէսը կըտարածեմ մեր բոլոր նահանգների մէջ եւ Չատկի կիրակի օրը ամենայն երեխանց կըբաժանեմ նշխած ձուաներ, իմ ազատութեան յիշատակի համար,» :

Այնպէս էլ կատարուեցաւ . ծէս դրին նրանք Չատկի ամսին բաժանել նշխած ձուաներ իւրեանց բոլոր նահանգումը :

Միւս երկրի բնակիչները, որտեղ տարածուեցաւ այս ծէսը, ասում էին . « Կոմսուհւոյ ազատուիլը մեզ համար ոչինչ նշանակութիւն չունի եւ մեծ ուրախութեան պատճառ էլ չէ մեզ համար . բայց այս նշխած ձուաները, մեր որդիերանց համար կունենան աւելի մեծ նշանակութիւն . ձուաները նրանց միտը կըբերեն ուրիշ սքանչելի ազատութիւն . — այն է մեր փրկչի ազատելն մարդկային ազդի մեղքից եւ մահուանից,» :

Գ . Տ . Ա .



19 Գարու սկզբին Նոռուայ դաւառի , Վարդարլուր գիւղումը , կենում էր մէկ Աամսարական ա-նունով գիւղացի : Նա էր շատ գեղեցիկ , աշխատաւոր եւ մէկ խօսքով ամենքին սիրեկան իրա բարութիւնովը : Նրա կնիկ Շուշանն էլ , որ երկու որդւոց մայր էր դառել , զարմացրել էր գիւղի կնոջերանցը իւր քաղաքավարութիւնովը եւ պարկեշտութիւնովը : Բայց աղքատութիւնը մեծ նեղութեան մէջ էր գցել այս երջանիկ գերդաստանը . երկու ասարի առաջ , գիւղի տների մեծ մասը անպգուշութիւնից այրուեցան , սրանց տունն էլ նամասպէս զոհ էլաւ կրակին , եւ էն օրից սկսած մարդը եւ կնիկը հազիւ կարողանում էին գտնել իւրեանց օրուայ ասրուստը : Մէկ կիւրակէ օր , երբ որ եկեղեցուց դուս եկան գիւղացիք , սկսեցին միմիանց հետ խօսիլ իւրեանց գործքերի վրայ . մէկ օտար մարդ ատայ Աամսարականին թէ Գումբրի ( Աղէքսանդրապօլ ) մէջ շատ գործքեր կան , եթէ դնաս այն տեղ հաւատան ինձ ամէն բանումը մեծ դադում կանես : Աամսարականը տուն գնաց , ուրախութիւնով նոր խաբարը պատմեց կնոջան եւ միւս օրը աւտօտեան , բարովելով իւր ընտանեացը ճանապարհ ընկաւ դէպ ի Գումբրին :

Կնիկը իւր փոքր որդին խտտած , գնաց իրանց տան կտուրը , նրա աչքերումը արտասունքները արմատի պէս փայլում էին , եւ Աամսարականի յեանւից մտիկ

անելով , երկար ժամանակ մնաց այսպիսի դրութեան մէջ , մինչեւ որ սիրելին բարբովին աչքիցը աներեւոյթ էլաւ :

Երկու օր ճանապարհորդութիւնից յետոյ հասաւ նա Գումրբի : Այս տեղ կամսարականը մէկ հարուստ քաղաքացւոյ մօտ մտաւ ծառայելու երկու տարուայ ժամանակով : Առաջին տարին կամսարականը 60 մանէթ ստացաւ , իսկ երկրորդ տարին նորա պարոնը , որոյ անունն էր Աշոտ , տեսնելով կամսարականի հաւատարմութիւնը շինեց 100 մանէթ փող : Կամսարականը աշխատում էր դաշտումը էնպէս , որպէս թէ իւր համար էր վարում նա դետինը եւ էսպէս այնքան սիրելի էլաւ նա թէ իւր պարոնին , թէ նորա ընտանեացը եւ թէ իրայ նման ծառայից , որ երբ երկու տարին լրացաւ եւ կամսարականը ուզում էր դառնալ իւր երկիրը , Աշոտը չկամեցաւ զրկուիլ հաւատարիմ ծառայից շինեց նրա ուճիկը 180 մանէթ : Այսքան փողը զիւղացի կամսարականին շատ թուաց եւ նա էնտեղ երրորդ տարին էլ մնաց : Չորրորդ տարին Աշոտը շինեց 250 մանէթ : Բայց չորրորդ տարուայ վերջին , կամսարականը բաւական համարեց այնքան ծառայութիւնը , միտքն եկան իւր Տրդատ եւ Մխիթար որդիքը , իւր ազնիւ կնգայ խնդիրքը , թէ “ շուտով յետ դառիր , ” եւ այն պատճառաւ էլ նա հաստատ մտքով գնաց իւր պարոնի մօտ վարձը ըստանալու : Այստեղ ամենքը ժողովուել էին կամսարականին ճանապարհ զցելու եւ նախաձայչիկ անելուց յետոյ , Աշոտը ասաց նրան .

— “ Լսիր սիրելի , դու ինձ ծառայեցիր չորս տարի . այս չորս տարուայ միջին ինձ համար աշխատեցիր ,

բայց դու այն աշխատածիցը ոչինչ չըւտացար բացի  
քու տարեկան ռոճիկդ , դու այս ժամանակում ոչ մէկ  
անգամ չես էլած ուրախութեան մէջ , ոչ մէկ ան-  
գամ ընկերներիդ հետ չես գնացել քէֆ քաշելու կամ  
այլ շուայրութիւն անելու , այլ բարի օրինակ էիր ա-  
մենքի համար : Ինձ համար մեծ ցաւ է եւ տրամու-  
թիւն , որ մեղանից հեռանում ես : Մենք բոլորեքեան-  
քըս շատ սիրեցինք քեզ . . . . . իմ ծառայքս մին-  
չեւ անգամ կըլաց ըլին քեզ չըտեսնելով . . . . . » :

Այս ժամանակը Աշոտը երեսը յետ դարձրուց եւ  
արտասուենքները սկսեցին թափիլ նրա աչքերիցը :

— « Բայց ինչ տեսմ . . . . . մենք լաւ ճանաչում  
ենք միմեանց . . . . . բոլորն ինչ որ կարող եմ տես  
քեզ . . . . . այդ է քոյ բարեկամութեան շնորհա-  
կալութիւնը , որ դու այսքան ժամանակ ինձ հաւա-  
տարմութեամբ ծառայեցիր . . . . . » :

Երկուսը միասին լաց էրան :

— « . . . . . Բայց կըկամենանա տամ քեզ երկու բարի  
խորհուրդ , որ շատ հարկաւոր են ճանապարհորդի  
համար , եւ մամուռանդ քեզ համար . . . . . » :

Կամարականը , լացից չը կարողանալով սրտա-  
խան տալ , երեք անգամ գլուխը ժաժ տալով յայտ-  
նեց իւր համաձայնութիւնը :

— « Կուզես ռոճիկիդ փոխանակ միայն խորհուրդներ  
տամ քեզ , եւ դու ձեր տուն որ հասնիս , կխմանա՞  
որ իմ խորհուրդներիս արժէքը քոյ ռոճիկիցդ շատ  
լինի . կհամաձայնիս դու այս բանին » :

— « Աս շատ ուրախ եմ ստանալ ձեր բարի խորհուրդնե-  
րը , բայց թէ ինչպէ՞ս երեւիմ կնոջս եւ որդկերանցս  
ստանց փողի , այսքան տարուանից յետոյ » :

— “ Եթէ ինձ կլսես . դու իմ ասած խորհուրդներովը աւելի կը հարստանաս եւ բաղտաւոր կը լինիս , քան թէ քոյ ուժիկովդ : Եթէ դու վէր տունես իմ խորհուրդներիս փոխանակ ուժիկդ , այն ժամանակը դառն անքատ էր հասնես տուն . իսկ թէ անուժիկ դնաս տուն եւ փոշխմանես արած բանիդ վրայ , յետ դառիր ես կըրտամ քեզ քո վարձդ , ” :

Այս բանիս վրայ կամասարականը համաձայնեց , եւ խնդրից իւր պարոնին ասի խորհուրդները : Աշտար ուրախութեամբ կամասարականի ձեռքից բռնեց եւ ասաց .

— “ Տես սիրելի , իմ խորհուրդները լաւ կատարիր , եթէ ոչ սաստիկ կը պատժուիս . լսիր անձ առաջին խորհուրդս . երբ տուն ըլնիս գնում , դրուատ , լայն եւ երկայն ճանապարհով ման արի , եւ ամենեւին նեղ ու կարճ ճանապարհներովը չգնաս , իմացար , ” :

— “ Իմացայ , պատասխանեց տխուր ձայնով կամասարականը , ասելով ինքն իրան եթէ երկրորդ խորհուրդը եւս այսպիսի լինի , ուրեմն իմ փողերը կը կորչեն բոլորովին , ” :

— “ Ասիր երկրորդ խորհուրդը . եթէ դու ճանապարհին մնաս մէկ անձանօթ մարդու տան մէջ քնելու , լաւ վարավորդ արա այն դերդաստանը . եթէ դու տեսնես որ տան տէրը ծէր է եւ տանտիկինը ջահել , փախիր շուտով այն տեղից եւ ամենեւին մի մնար այն տեղ քնելու , լսեցիր , անձ այս են իմ խորհուրդները , ” : Այս ժամանակը ներս մտան տան տիկինը եւ երեխայքը . բոլորեքեան բերում էին կսմաբակաւի համար պարգեւներ , տան տիկինը երեք դաթայ տուեց եւ խնդրեց նրան որ այն երկուսը ուտի ճանապարհին

խակ երրորդը տանի իւր կնոգայ համար , դրեց նրա ջէրը ուկարեց որ ոչ ոք չհանի : Աամսարականը բարեւեց նոցա եւ գնաց ախուր սրտով դէպի իւրեանց երկիրը :

Ճանապարհին շատ էր մտածում նա այն խորհուրդների վրայ եւ երբեմն իրան յիմար էր անուանում , որ այնքան փողի հետ փոխեց դարդակ խորհուրդները . բայց էլի ասում էր ինքն իրան , կարելի է այն խորհուրդներում թագուն , խորը մտքեր լինին , ուլ դիտէ :

Հասաւ նա այն գիշերը մէկ քուրդ շոբանի խրճըթին եւ այն տեղ իւր ծանօթի մօտ քնեց Աամսարականը : Միւս օրը առաւօտեան պատահեցան նրան երկու վաճառականներ , որոնք գիւղից գիւղ ման էին ածում իւրեանց ապրանքը ծախելու համար : Միտը բերեց որ իւր ազնիւ Շուշանի համար մէկ բան չէ տանում ընծայելու , էնդուր էլ մէկ քանի շայի ունենալով առաւ նրանցից մկրատ : Մբանից յետոյ հասան մեր ճանապարհորդները մէկ այնպիսի տեղ , ուր որ ճանապարհը երկու էր բաժանում , մէկը երկայն էր ուլայն , միւսը կարճ ունեղ : Այս տեղ վաճառականները Աամսարականին խնդրեցին , որ նա էլ գնայ կարճ ճանապարհով . բայց միտը բերելով Աշտի տուած խորհուրդը , Աամսարականը բոլորովին չհամայճայնեցաւ վաճառականների յետ եւ գնաց մեծ ճանապարհովը , իսկ վաճառականները կարճ ճանապարհովն : Արբ հասաւ Ղարաքլիսիցը մօտ , ինչ դարմանք տեսաւ . իւր ընկեր վաճառականներին սայլի մէջ դրած կարալու , շուտով տանում էին բժշկին հասցնելու : Աամսարականը հարցրուց եւ իմացաւ որ աւաղակներ են պատահել նրանց եւ բոլոր ապրանքները խլել են բացի էտ վի-

բաւորելն : Այսանդ Աամսարականը չնորհակարտ  
Թիւն արաւ Աստուծուն . էն ժամանակն խնայաւ ն  
Աշոտի առաջին խորհուրդի արժէքը :

Արեղակը մտնում էր եւ Աամսարականը աշխատու  
էր հասնիլ մէկ շորանի սուն , որը որ հեռուից էր  
ւում էր դաշտի միջում . քանի մտանում էր նա  
այնքան կարծես թէ նոր ուժ էր ստանում մարմնու  
մէջ , եւ փոքր ինչ առաջ գնալով , մտաւ այն սուն  
դոնադ : Այնտեղ կային եւ երկու ուրիշ ճանապարհ  
հորդներ , որոնք նմանապէս դոնադ էին : Երբ փոք  
ինչ հանդատացաւ տեսաւ , որ տան սիկիւնը էր մէկ ջան  
աղջիկ , որն որ տուն ու դուրս անելով այն օթախը  
կասես թէ մարդու էր սպասում : Աամսարականի մտ  
նատած էին այն երկու դոնադ մարդիկը , որոնք լա  
ճանանչում էին տան սիրողը : Յանկարծ դոները բա  
էլան եւ մէկ ծեր մարդ ներս մտաւ դոնադների մտ  
նա էր տան տէրը , որ շատ սիրով եւ քաղցր ժպտո  
մտ կայցաւ իւր ջանէլ կնդան եւ պատմեց թէ շատ յա  
ջողութիւնով է անց կացրել այն օրը : Այս ժամանակ  
Աամսարականը միտը բերեց Աշոտի երկրորդ խորհուր  
դը եւ խորն մտածման մէջ մտաւ : Երկար մտածելու  
յետոյ , նա կամեցաւ կատարել Աշոտի հրամայածը  
Հանդարտ , առանց խօսք տալու վեր կայցաւ տեղից եւ  
դուրս գնաց . դիշերը շատ մութն էր , մթութեան  
սաւանի՛ վեր էր կայցել սաստիկ բուք : Աամսարականը  
ձեռքերը դէս եւ դէն դցելով , դտաւ մէկ սլատ եւ այ  
պատին քսուելով , քսուելով . մտաւ ախոռը , ին  
տեղ որ դիզած կար բաւական խոտ . տեսնելով որ չէ  
կարելի այսպիսի փոթորիկի ժամանակը ճանապարհ  
գնալ , նա փաթաթիլեց խոտի մէջ եւ մտում էր առա

ւօտին : Շուտով բողոքն հանդարտուեցաւ , միայն ան-  
 ձրեւի ձայնն էր լսուում խորին լռութեանը մէջ : Յան-  
 կարծ ձիու ոտի ձայն եկաւ : Աամսարականը ան-  
 հանդատութեամբ ականջ էր անում այն ձայնին , ի-  
 մացաւ որ ձիաւորը մօտացաւ ախոսի դռանը եւ վէր  
 եկաւ ձիուցը , վերարկուն թողնելով ձիու վրայ քաշ-  
 արած : Կ'նչ դրութեան մէջ էր Աամսարականը , խեղ-  
 ճը ահից ու դողից չէր խմանում ինչ անել , երբ որ  
 երկաթի ծրնդոցի ձայնն էլ լսեց խօսմ , տեղնուտեղը  
 մնաց չչկած : Ձիաւորը մօտացաւ պատուհանին եւ  
 ումն որ սխեց կանչել : Շուտով երեւեցաւ տանաթիկինը  
 մտնով : Աամսարականը կամաց կամաց , սուս , անմուռնչ  
 դնաց ձիու մօտ եւ թախ կացաւ նրա ետեւից . այս  
 ժամանակը լսեց նա պատուհանից ահա այս հետե-  
 կալ խօսակցութիւնը .

- Դո՛ւ ես , Մարիամ :
- Սկա՛ր ի ի . . . . . պատրաստ ես . . . . .
- Դո՛ւ . . . . .
- Ես վաղուց եմ պատրաստ , խ՞ մարդը քանի ժա-  
 մանակ է քնած է . . . . . դու հեշտ կարող ես նրան  
 սպանել . . . . . եւ եթէ սպանես ի հարկ է կտանաս  
 քոյ վարձը անպատճառ :
- Բայց ասան ո՛ւմ վրայ գցենք մարդասպանութիւնը :
- Մեր տանը երկու ճանապարհորդներ կան . . . . .  
 ես բողոքը մտածել եմ թէ ինչ պէտք է անել :
- Թո՛ղ մտնեմ . . . . .

Այս ժամանակը այն մարդը պատուհանից մտաւ  
 ներս եւ երկոքեան էլ չը երեւեցան :

Ձի կարելի պատմել Աամսարականի վախը : Նա ու-  
 դում էր բղաւել , բայց խեղճի լեզուն կապուեց , փոքր

ժամանակից յետոյ , երբ ահը քիչ անց կացաւ , սա  
մտածեց թէ ժամանակով կարելի է պահանջեն ինձա-  
նից վկայութիւն , ճշմարտութիւնը հաստատելու հա-  
մար , թէ ով է տարանդն : Կտրուր էլ հաննեց իւր մըկ-  
րատը եւ մօտ կացաւ ձիուն , կտրեց վերարկուից մէկ  
կտոր , եւ ուրիշ նշաններ էլ դուրս կտրեց մկրատով  
թամքի վրայ : Յանկարծ լսեց մէկ ձայն , վախը կար-  
ծեա թէ թեւեր է տուաւ մեր Կամսարականին , նա  
վազելով , հեռացաւ ախտուից : Մինչեւ լուսանալը շա-  
րունակում էր նա շտապով գնալը եւ ճաշի ժամանա-  
կին հասաւ իւրեանց տուն : Նրա կնիկը եւ որդիքը  
գէմ եկան նրան . Կամսարականը շուտով պատմեց  
բոլոր իւր գլխին անց կացածները , այն երեք աար-  
ուայ մէջ , յետոյ հաննեց իւր աղջիկպարտնի տուած  
դաթէն եւ տուեց կնոջն : Արբ որ կտրեցին դա-  
թէն , մէջը տեսան մէկ քիսայ , 590 մանէթ փող  
եւ մէկ էլ նամակ : Կամսարականի մեծ որդին , որը որ  
սովորել էր կարդալ գիւղի քահանայի մօտ , կարդաց  
նամակում այս բանա .

Սիրելի Կամսարական :

« Յոյս ունիմ որ այս նամակը հասնի քեզ , եւ ի  
« հարկ է կը հասնի , որովհետեւ դու ինքզ քու ջէբումե  
« ունիս : Արեք տարւայ մէջ ես լաւ հասկացայ քու  
« բնութիւնը : Դու շատ թեթեւամիտ , վախկոտ եւ  
« շատախօս էիր , ես վախենում էի քեզ համար , կար-  
« ծելով թէ քեզ անպատճառ ճանապարհին կը թա-  
« լանէին եւ կերթայիր քո տուն , առաջուանից առաւել  
« խեղճ : Բայց ես տուի քեզ երկու բարի խորհուրդ-  
« ներ եւ յոյս ունիմ , որ խմանաս էնդոնց արժանա-  
« ւորութիւնը : Ահա քեզ եւ երբորդ խորհուրդը առանց

« փողի : Գու փող ունիս , ուրեմն աշխատէ լաւ  
« պահել : Բանացրու օգտակար բաների վրայ քո  
« վարձը եւ Աստուած կօզնի քեզ քո բոլոր բարի գործ-  
« քերում : Այս խօսքերը խնայ է անում քեզ քու վա-  
« դուցուան պարոն եւ բարեկամ

« Աշտար »

Ի՞նչպէս ուրախացան այս բանիս վրայ բոլորեքեան :  
Մնում է հիմայ մէկ բան : Աամսարականը իւր խըղ-  
ճմտանքի տանջուելուց ազատուելու համար , զնաց  
խնայ արաւ սպանութեան որպիսութիւնը , ինչպէս որ  
խնայաւ ախոռումը , իւրեանց նահանգապետին , որը  
որ ուղարկեց նրան շուտով դաւառապետի մօտ նա-  
մակով : Այս օրուայ մէջ հասաւ Աամսարականը Ղա-  
րաքլիսայ , նրան խկոյն ներս տարան դատաստա-  
նատուն . հէնց նոյն րօպէին կատարում էին մահուան  
վճիռը երկու վաճառականների վրայ , որոնք անցեալ  
զիշերը , նրա հետ էին խրճիթում : Սպանածի կնիկը  
այդ բանը զցել էր նրանց շինքը : Այն կնգան միւս  
առաւօտը դտել էին ձեռքերը եւ ոտները կապած եւ  
քուչումը վէր զցած : Նա ասում էր թէ այն երկու ճա-  
նապարհորդները բռնել են նրան մէջ գիշերին , ձեռ-  
ները եւ ոտները կապել են եւ մարդուն սպանել : Սպա-  
նողների ետեւից խկոյն ուղարկել էին մարշիկ , որոնք  
բռնել էին նրանց եւ բերել դատաստանի տակ զցել :  
Աամսարականի խնդրքով դատաւորները կրկին նստեցին  
իւրեանց տեղերում , կնիկը , որ այն ժամանակը այս  
տեղ էր , կամաց հեռացաւ մէկ կողմը , որ Աամսա-  
րականը չը ճանաչի նրան :

— « Պարոններ , սասաց Աամսարականը , առաջ քան


Ես կը սկսեմ խօսքերիս հաստատելը , կհնդրեմ հրա-  
մայեք , որ այս տեղից ոչ ոք չը դուրս չնայ : Եթէ ես  
չեմ սխալուում մարդս սպանները այստեղ են , — Կնիկը  
խելոյն երեսը ծածկեց ազլխով : Սկսեց Կամսարականը  
մանրամասնաբար պատմել բոլոր դործքի որսխաու-  
թիւնը եւ վերջը մտոր այն կնոջը կողմը տանելով ա-  
սաց , « ահա այն կնիկը , որ մօտացաւ պատուհանին  
մոմով եւ խօսում էր այն աւազակի հետ : Եթէ կուզէք  
խօսացրէք այս կնգան այն մարդոյ հետ ( այն մարդը  
եւս այստեղ էր գտնուում ) եւ ես այն սահաթին կիմա-  
նամ նրանք են թէ չէ : Իսկ այդ կինը . . . . այդ  
աւազակը . . . . դրա վերարկուն , որոյ կտորը ահա  
ինձ մօտ է : Տեսէք արդեօք դրճւտ եմ ասում թէ չէ :  
Վերջապէս հրամայեցէք բերել դորա ձիու թամբը ,  
դուք կը տեսնէք նրա վրայ երեք նշաններ մկրատով  
չինած » :

Այսպէս ահա խօսեց Կամսարականը : Եինը լսելով  
Կամսարականի խօսքերը ուշաթափ էլաւ բոլորովին :  
Աւազակը , որը որ բռնուեցաւ Լսմի սլալանի ցոյց  
տալովը , կամենալով իրան արդարացնել դատաւորներին  
առաջը , ասում էր , ես խօսի մեղաւոր չեմ այդ բա-  
նումը , այդ կնիկն է ամէն բանի պատճառը : Անմեղ  
դատապարտուածներն ազատուեցան պատժից , նը  
րանք , ուրախ ուրախ գնացին տուն փառարանելով  
Աստծուն եւ օրհնելով իւրեանց սողատողին : Կամսա-  
րականն էլ ամէն բանը վերջացնելուց յետոյ խնաց  
այն վաճառականների յետ : Նրանք կրկին սկսեցին  
գովել ու փառաւորել Կամսարականին , բայց նա ա-  
սաց « սիրելիք , առաջ փառք եւ գոհութիւն Աստու-  
ծոյ , որ նա էր զլխաւոր պատճառը ձեր եւ խօս ազա-

առթեանը եւ յետոյ շնորհակալութիւն , եւ յամենայն  
սրտէ շնորհակալութիւն խմ բարերար Աշոտին , ինձ  
բարի խորհուրդներ առաջին եւ ձեռն ապրաքաղաքութիւնից  
եւ մահից աղատողին ,, :

Ա . Ե .

ՓԱՅՏ ԿՏՐՈՂԸ ԵՒ ՆՈՐԱ ԿՆԻԿԸ :



Մէկ հարուստ իշխան որս անելու ժամանակը , հեռացաւ իւր ընկերներէից եւ բոլորովին կորցրեց ճանապարհը : Անտառում մնաց մէնակ , չէր խմանում որ կողմը քչել ձին , որ գտնի ճանապարհը . վերջը կամեցաւ փորձել իւր բաղդը . ասաց՝ որտեղ տանէ ձին ես էլ համաձայն եմ սորա հետ լինել , եւ ձին սկսեց զգուշութեամբ կամաց կամաց դնալ դէպի մութ անտառը . ժամանակ առ ժամանակ ականջները սրելով եւ խրխնջալով , կարծես թէ անտառի հանդարտութիւնը եւ մթութիւնը նրա սրտում մէծ ահ էին գցում : Փոքր ժամանակից յետոյ յանկարծ մէկ ձայն լսուեցաւ իշխանին , շուռ տուեց նա շուտով ձին այն կողմը , որ տեղից լսուեցաւ ձայնը . իշխանը տեսաւ մէկ մարդ եւ կնիկ , որոնք փայտ էին կտրում եւ խօսում միմեանց հետ :

Անիկն ասաց . « պէտք է ճշմարիտն ասել , որ մեր օրուայ հացը շատ դժուարութեամբ ենք ճարում , շատ ենք աշխատում . բայց ինչ օգուտ . . . . պատահում է երբեմն , որ բոլորովին հայի կարոտ ենք լինում , » :

— « Ինչի ես գանդատում , սիրելի Մարգարիտ , պատասխանեց նորա մարդը : Տրամութիւնով , լալով չենք կարող հարստութիւն ժողովել . . . . չէ Մարգարիտ իմ , չպէտք է մենք տրանջանք մեր վիճակի վերայ . . . . մեծ մեղք է . մենք էնդուրով բաւականա-

հանք ինչ որ ունինք , քեզ լաւ յայտնի են այնպիսի մարդիկ , որոնք խեղճ են մեղանից եւ աւելի տխուր կեանք են վարում , :

— “ Նւ կան մարդիկ , որոնք մեղանից քիչ են աշխատում . բայց մեծ հարստութիւն ունին , ապրում են բաւականութեան մէջ . . . . օրինակ մեր բարոնի կառաւարդը , ” :

— “ Մարգարիտ , խնդրեմ օչովի վերայ չբամբասես : Խոնչ ես ուզում . մենք երկուսս փառք Աստուծոյ , առողջենք , կուշտ ենք եւ ուրախ : Բայց երբ որ կըբամբասենք մեղանից հարուստների վերայ , էն ժամանակը Աստուած կը զրկէ այս մեր բաղդաւորութիւնիցն էլ : Մի թէ կարծում ես դու , թէ հարուստները այնպէս բաղդաւոր են , որ կարելի է նրանց երանի տալ : Շատ անգամ նրանք մեղանից տարաբազդ են ըլնում . հաւատացնեմ քեզ , որ շատ հարուստներ հախանձում են մեզ եւ մինչեւ անգամ կփոխեն իւրեանց պաշտները եւ հարուստութիւնը մեր փոքրիկ տան եւ խղճութեան յետ : Մենք խեղճ ենք , բայց այս բանը ոչ մէկ ժամանակ մեզ չի արգելի վնել բաղդաւոր : Մտիկ տուր երկնքի կամարին , արեգակին , սա մեղ տաքացնում է եւ պահպանում է մեզ այնպէս , ինչպէս մեղանից հարուստներին եւ մեծաւորներին , ” :

— “ Սիրելի Յովհաննէս , դու բարկանում ես ինձ իմ անբաւականութեան համար . ներիր ինձի , որովհետեւ իմ բոլոր ասածներս առանց մտածելու էր . համբուրիր ինձ եւ մուսայիր իմ այս օրուայ զանգստները , ” :

Նրանք փաթաթուեցան միմեանց այնպիսի սիրով եւ

բարեկամութեամբ, որ թախկացած իշխանը այս տե-  
սարանի վկայ լինելով, շատ խղճաց նրանց վրայ .  
նրա դուժը շարժուեց անասելի կերպիւ եւ համարեալ  
արտասուելի աչքերով երեւեցաւ նրանց : Մարդը եւ  
կնիկը շատ վախեցան անձանօթ մարդ տեսնելով :  
Յովհաննէսն դտակը վէր կալած առաջ դնաց :

“ Բարի մարդիկ, ստաց իշխանը, դառնալով դէպ  
ի փայտ կտրողը . ես խնայայ ձեր խօսակցութիւնը,  
խնայայ նմանապէս որ դուք մեծ դժուարութեամբ եք  
ձարում ձեր օրական հացը . ես կտանեմ ձեզ ինձ մօտ  
խմ տունը, կը կերակրեմ, կը հաքցնեմ եւ ձեր ամե-  
նայն հոգսը կը քաշեմ : Դուք իմ տանը կունենաք  
այն ամենայն բանը ինչ որ սրտով կցանկանաք . բայց  
հիմի խնդրեմ, ցոյց տուէք ինձ ճանապարհը եւ եկէք  
ինձ հետ իմ պալատը ” :

Փայտ կտրողը ցոյց տուեց ճանապարհը, իշխանը  
հեռացաւ անտառից, շուտով դտաւ իւր կորցրած ըն-  
կերներին, որոնք շատ էին աշխատել նրան գտնելու,  
բայց նրանց չարչարանքը դիփ ի դուր էին էլել :

Երբոր հասան պալատը, փայտ կտրողին եւ նրա  
կնգան տարան առանձին սենեակ, ջուկ ծառաներ  
ատին եւ հաղորին նրանց թանգազին շորեր : Առաջուայ  
թշուառ օրերը նրանք բոլորովին մոռացան, ամենայն  
բան ունէին մեծ բաւականութեամբ : Այն ժամանակը  
նրանք ոչ թէ չոր դարմանի վերայ էին քնում վաղու-  
ցուայ պէս, այլ բմբլէ փափուկ գողենքի վերայ : Նոր  
բաղդաւորուածները ճաշն ուտում էին իշխանի հետ  
սեղանի վերայ, մէկ կերակուրը միւսից լաւն էր լինում  
եւ պատուական, նրանց ճաշը բաղկանում էր տասն  
եւ երկու տեսակ կերակուրներից . բայց ազահութիւնը

յաղթում էր երկուսինէլեա , ոչ մէկ կերակուրը չէին թողնում առանց ուտելոյ , այլ ամէն տեսակից վերէին կաշնում մեծ բաժիններ :

Մէկ անգամ տաան եւ երկու կերակուրներից սաւահի , բերին տաան եւ երրորդն էլ : Մարդարիտը շատ զարմացաւ այս բանիս վերայ . կերակուր բերող ծառայն , դրեց այն սեղանի վրայ եւ ասաց , թէ “ իշխանը փոքր ժամանակ հեռացաւ պալատիցը , հրամայեց որ ոչ մէկը ձեզանից չմտենայ սրան եւ մինչեւ անգամ չմտիկ տաք , թէ սրայ մէջը ինչ կայ , ” :

Իշխանի անսովոր հրամանքը Մարդարիտին տարակուսութեան մէջ զցեց : “ Ի՞նչ պէտք է ըլնի սրա մէջը էնպիսի բան , որ մեզ մտիկ տալն էլ մինչեւ անգամ չէ հրամայեա՞ծ , ասաց Մարդարիտն մօտ գնալով ամանին եւ կամենալով վեր կաշնել խուփը :

— “ Համբերիր . . . . ի՞նչ ես անում . . . . միթէ դու մտացար իշխանին՝ պէտք է նրա հրամանին հնադանդուիլ , ” :

— “ Ես միայն կամենում եմ մտիկ տալ եւ տեսնել , թէ ի՞նչ կայ արդեօք այս ամանի մէջ : Էտեղ խօսմ ոչով չկայ , ի՞նչպէս կխմանայ իշխանը , թէ ես բաց եմ արել ամանը , ” :

— “ Մարդարիտ , Մարդարիտ . ասաց Յովհաննէսը , մի լինիր էզքան հետաքրքիր . հաւատան ինձ որ մեզ էտուր համար կպատժէ իշխանը , ” :

“ Ճշմարիտ է , որ դու շատ շիտթուած ես սիրելի Յովհաննէս : Ես ասում եմ քեզ , թէ օչով չի խմանայ այս բանը եւ ես էլ կհանդարտուիմ , հետաքրքրութիւնը ինձ սաստիկ նեղացնում է , ” :

— “ Ա՛յլ գիտէ , շատ կարելի է որ իշխանը նշանէ : 11

դրել ամանի վերայ եւ եթէ մենք սրան ձեռք տանք,  
անպատճառ կխմանայ նա :

Մէկ խօսքով եւ չեմ համաձայնիլ եւ ամենին անդ  
մասին եւ չեմ համարձակիլ իշխանի , մեր բարերարի  
հրամանից դուրս բան անել :

« Հիմա ինչ որ կուզես արձ , ես չեմ կարող աւելի  
դիմանալ , եթէ չխմանամ տեղնուտեղը կը մեռնիմ . . .  
Ես պատրաստ եմ ամէն բանից զրկուիլ , հարստութիւնից  
էլ , փառքից էլ , շորերից էլ , էլի թող վաղուայ պէս  
ապրիմ խղճութեան մէջ , կը կոտորեմ փայտ . . . .  
ամենայն բանում պատրաստեմ , եւ անպատճառ պէտք  
է խմանամ , թէ ինչ կայ էս ամանի մէջ . . . » :

Էս խօսքն ասաց եւ գնաց խկոյն վէր առաւ ամա-  
նի խուփը :

— « Ո՛հ տարաբաղդութիւն . . . . մենք կորանք բո-  
լորովին . էդ ինչ արիւր անշարհակալ . . . ո՛հ Աստու-  
ած . . . . ինչ կասէ հիմայ իշխանը : Ռ՞նչ կլինի հի-  
մայ մեզ հետ » : Էսպէս աղաղակեց անուց Յովհաննէսը  
ձեռները բարձրացնելով դէպ ի ամանը :

Մարդարիտը սկսեց դողալ , դեղնեց ինչպէս կտաւ  
եւ չէր համարձակում բարձրացնել աչքերը . . . . :

Ամանի մէջ կար փոքրիկ թռչուն , որ երբոր խու-  
փը վէր առան , խկոյն թռաւ եւ բաց պատուհանիցը  
փախաւ , գնաց բողը եւ էնտեղ թախ կացաւ : Ի դուր  
Յովհաննէսը եւ Մարդարիտն յետեւից վաղեցին շատ  
աշխատեցին , շատ չարչարուեցան . բայց թռչունին  
չկարացան բռնել :

— « Ի՞նչ կասի իշխանը , ասում էին միմեանց խեղ-  
ձերը եւ ակամայ լաց էին ըլնում » :

Էն ժամանակը սուն մտաւ ծառայն եւ ասաց թէ

« Իշխանը եկաւ եւ էս բոսպէին կղայ խմանալ թէ կատարել էք արդեօք նրա հրամանը , որ ձեզ հնադանդութեան համար վարձատրի եւ անհնադանդութեան համար պատժի , » :

Շուտով դնաց նրանց մօտ իշխանը եւ տեսաւ Յովհաննէսին եւ Մարգարտին , որ լաց էին ընում . հարցրեց նրանց լաց ընելու պատճառը : Յովհաննէսն եւ Մարգարտն ընկան իշխանի ոտների տակ . . . . խեղճերը էնպէս յայտնեցին լալու պատճառը :

« Անշնորհակալներ ես ձեզ բարերարութիւն արի , ընդունեցի ձեզ քաղցրութեամբ , տուի ձեզ էն ամէն բանը ինչ որ չէիք կարող ցանկանալ էլ : Ես կարծում էի , թէ ձեր մէջը կղտնեմ երախտագիտութիւն , հաւատարմութիւն եւ հնադանդութիւն : Այն ամէնը ձեր փորձելու համար էր , եթէ կատարէիք խմ հրամանը , կբաղդաւորէիք ձեզ մինչեւ ի ձեր մահը . բայց դուք հակառակեցաք ինձ . . . . : Հեռացէք խմ սչքի առաջիցը . . . դնաց՝ք անտառը , ձեր խրճիթը . էլի չարչարուեցէք վաշտցուայ պէս եւ լաւ խմացէք , որ ձեր տարաբաղդութեան պատճառը դուք եք եւ ոչ թէ ես : Դուք ձեր անհնադանդութեան համար կորցրրիք ամենայն փառքը . . . » :

Այս ասելուց յետոյ իշխանը դուրս գնաց , Յովհաննէսը եւ Մարգարտն կանգնած մնացին անդնուտեղը շշկած : Հարստութեան ճաշակն առածները շատ նեղացան , առաջուայ կեանքը նրանց այնպէս վատ էր թուում , որ Մարգարտն յուսահատուում էր , միտը բերելով որ շուտով պէտքէ հրաժարուի այն հարուստ եւ գեղեցիկ շորերից , ճաշից եւ ամենայն փառքու պատուից : Նա արհամարհում էր իրան , անիծում էր

խը դլուխը հետաքրքրութեան համար . բայց էլ զըղէ  
ջանալու ժամանակ չէր : Աղի արտասուէքներ թա-  
փելով նա հանեց իւր պատուական հաքուստը , հա-  
ղաւ վաղուցուայ գջլտած , պատուած շորերը , որով  
մտել էր պաղատը : Նմանապէս էլ Յովհաննէսը մէկ սա-  
հաթից առաջ կարծես թէ մէկ երեւելի աղնուական  
մարդ էր , բայց հիմի հագաւ իւր ցխտտ կաշուէ շորերը :

Կացինը խրեց դօակի մէջ եւ յողոց քաշելով բռնեց  
նա Մարդարտի ձեռքը եւ ասաց .

“ Մարդարիտ , իմ սիրելի կնիկ , մենք էինք առաջ  
բաղդաւոր եւ հիմի էլ կարող էինք լինիլ նմանապէս  
բաղդաւոր , եթէ դու չէիր էլէլ չտփաղանց հետաքրք-  
րիր . քո հետաքրքրութիւնովը կորցրիր դու ինձ էլ ,  
քեզ էլ . բայց ինչ անենք , դիւի Աստուծոյ բան է :  
Գնանք էլի ահա առը , միասին լաց ընենք մեր տա-  
րաբաղդութեան վերայ եւ միտներս բերենք այս օդ-  
տակար դասը , յիշենք միշտ եւ ամենայն ժամանակ , որ  
հետաքրքրութիւնը շատ անգամ մեզաներ է տալի մեզ  
եւ կարող է նմանապէս տարաբաղդութեան պատճառ  
դառնալ : Ահարգել , անպատուել եւ քեզ չեմ կամե-  
նում , Մարդարիտ դա . աւանց էն էլ պատժած ես : Եւ  
այսպէս , սիրելի Մարդարիտ իմ մենք միասին տա-  
րաբաղդ էինք , միասին բաղդաւոր էինք . էլի միա-  
սին քաշենք մեր նեղութիւնները եւ բողորովին չը-  
տրանջանք եւ չդանդատուինք , ոչ մեր վիճակի վերայ  
եւ ոչ ուրիշ մարդկանց վերայ : Ամենայն տեղ կայ  
բաղդաւորութիւն եւ տրամութիւն , պաղատների մէջն  
էլ է մարդս լաց ընում եւ տրամում եւ ոչ սակաւ ան-  
գամ խրճթի , յետին քոխի մէջ , պաղատներից աւելի  
ուրախութիւններ եւ բաղդաւորութիւններ կան : Աղքա-

տի համար երբեմն հեշտ է հարուստ դառնալ , ինչպէս  
դու փորձեցիր քեզ վերայ . բայց աւելի հեշտ է հա-  
րուստի համար աղքատ դառնալ : Մեր բարերար իշ-  
խանը կամենում էր մեզ բաղդաւորացնի , բայց մենք  
մեր անհամբերութեամբ բոլորը կորցրինք : Հեռա-  
նանք այս ամէն հարստութիւններից , հրաժարա-  
կան ողջոյն տուր այս ամենայն փառքերին եւ արի  
էլի դնանք մեր անտառը , մեր խրճիթը , առաջուայ  
պէս փայտ կտրենք եւ մեր արեան քրտնքով աշխա-  
տենք էլի ճարել մեր օրական հացը ,, :

Էս որ ասաց , Յովհաննէսը համբուրեց Մարգարտին ,  
խնդրեց ծառային , որ շնորհակալութիւն անի իշխա-  
նին առաջուայ նրա բարերարութեանց համար եւ զը-  
նաց իւր կնոջ հետ իւրեանց անտառը :

ԽԵԼՕՔ և ԲԱՐԵՍԻՐՏ ԿՈՍՏԱՆԴՆԻ

ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐԸ :



“ Յանկայի է ինձ քո վիճակը , սիրելիդ իմ Կոստանդին , ասաց նրան մեծ եղբայրը , քոյ օրերը անց են կենում հանդարտութեան եւ ուրախութեան մէջ , տրամութիւնը , դարդը եւ հոգսերը դեռ եւս քեզ յայտնի չեն . ոչ մէկ բան չէ տրամացնում քեզ , միշտ ուրախ ես , միշտ հանդարտ : Ո՛հ ոսկեայ ժամանակ . . . ” : Այս խօսքերը շատ խորը տպաւորուեցան բարեսիրտ երեխայի հոգւոյ մէջ , որ միշտ իւր փոքր հասակից սկսած , ամէն բանը սովորում էր հիմնաւորապէս եւ մէկ իքմին չէր թողնում առանց մտադրութեան : “ Հա՛ , զորդ որ , ասաց Կոստանդինը ինքն իրան , ինչ զեզեցիկ է զորդ իմ դրութիւնը , իմ օրերը : Ես մեծ մեծ գործքեր չունիմ . չեմ գիտի նմանապէս ինչ է տրամութիւնը եւ հոգսը , ամենայն աեղ միայն իմ ցանկութիւններն եմ տեսնում , ամենքը կանչում են ինձ ուրախանալու , ամէն մարդ ասում է ինձ անդադար . ” ուրախացիր քո մանկութեան օրերում ” :

“ Բայց թէ միշտ կլնի էս , — ան չէ . շուտով կկորչի ” :

Ես տեսնում եմ շատերին , որոնք առաջ ինձպէս ուրախանումէին , բայց հիմի էլ չեն ընկերանում իմ ուրախութեանցը : Նրանց խաղալու եւ ուրախութեան ժամանակը անց է կացել . շուտով իմն էլ կանցկենայ եւ կգայ ժամանակ աշխատանայ եւ հոգսերի : Ես էլ

ուրիշների պէս ժամանակով կհարկադրուիմ զանազան պարտաւորութիւններ կատարել, որոնց համար պէտք է ունենամ աշխատասիրութիւն եւ շատ դիտութիւն :

« Աթէ աչապէս է . ուրեմն ես շատ անխելք կլնիմ, եթէ այս մանկութեան օրերս կատարեայ թեթեւամտութեամբ անց կացնեմ եւ բոլորովին չմտածեմ զապոց բաների վրայ : Չէ, երկնաւոր Հայրը ինձ զանազան շնորհքներ է տուել . իհարկ է ոչ էնդուր համար, որ իմ բոլոր ժամանակը անց կացնեմ խաղերի եւ պարապութեան մէջ : Աս շատերին կճանասչեմ, որոնք երեխայութեան ժամանակը օգտակար բաներ չեն սովորել եւ այժմ մեծ անպատուութեան եւ աղքատութեան մէջ են եւ պէտք է լայց վնիին իւրեանց մանկութեան օրերի կորցնելու համար :

« Այդպիսի տարաբաղդներին տեսնելով, պէտք է զգուշացնեմ ինձ թեթեւամտութիւնից, ուրախութիւնից եւ խաղերից եւ պէտք է մեծ սիրով եւ ցանկութեամբ պարապեմ դիտութիւններով եւ ուսումով : Աչապէս, բարի ծնողք իմ, ես կկատարեմ ձեր ցանկութիւնը եւ կը պահպանեմ ձեր տուած բարի խրատները . կթողնեմ մանկութեան խաղերը եւ ուրախութիւնները եւ ամենայն ժամանակ կաշխատեմ սովորիլ իմ դասերը եւ բարի գործքերը : Աս ինչպէս բաղդաւոր կլնիմ, եթէ անպատճառ կատարեմ ասած խօսքերս : Բայց անի . մէկ կողմանէ ես պատրաստ եմ ամենայն բարին սնել, պատրաստ եմ խաղերս եւ պարապորդութիւնս թողնել . բայց միւս կողմանից իմ ընկերները ասում են ինձ « ինչ ժամանակ է քու սովորելոյ, արի գնանք փոքր ինչ խաղանք », եւ դժուարութեամբ եմ յազմում իմ ցանկութեանցը, թէպէտ եւ շատ ուզում

եմ հեռանալ նրանցից : Ես ուժ չունեմ , չունիմ եւ հաստատ կամք , ինչ տեղից դռնեմ օգնութիւն , ումից խնդրեմ հաստատամտութիւն ,, :

“Նրկնաւոր Հայր , Քոյ մէջն է իմ յոյսը . դէպ ի Քեզ եմ բարձրացնում իմ աչքերը եւ իմ սիրտը : Քեզ մօտ եմ ուղարկում իմ աղօթքները , յանուն քոյ Միածին որդւոյ եւ իմ փրկչի , որ շատ սիրում էր երեխանց : Դու տեսնում ես իմ սիրտը . ես կամենում եմ լինիլ խելօք եւ բարեբարուոյ , լուսաւորէ իմ միտքը ճշմարիտ խմաստութիւնով , սաքացրու իմ սիրտը բարի սիրով : Ուղարկէ Քոյ պահապան Հրեշտակը , որ պահպանէ ինձ յամենայն չարեաց եւ հաստատէ իմ թեթեւամտութիւնը : Իմ սրտի մէջ արմատացրու այն միտքը , թէ ես ամենայն տեղ , ուր որ ըլնեմ , միշտ Քոյ առաջըն եմ , եւ ոչ թէ միայն իմ գործքերը , այլ եւ ծածուկ մտքերս եւ իմ բոլոր ցանկութիւնները յայտնի են Քեզ : Հաստատէ իմ մտքի մէջը եւ այն բանը , թէ Դու հիմի իմ Հայր ես , բայց մէկ ժամանակ կլինիս իմ Գառաւոր եւ կպահանջես ինձանից իմ գործքերի հաշիւը : Եւ Քոյ սուրբ օրէնքները հաստատուն կանոն լինին իմ կենաց մէջ . ուրիշ մեծ ուրախութիւն չկայ ինձ համար , Քոյ դուրեկան գործքեր անելուց սուահի . ուրիշ մեծ տարաբաղդութիւն չեմ գիտի , Քեզ բարկացնելուց սուահի : Նրկնաւոր Հայր , առանց Քեզ ես մէկ անուժ արարած եմ , չեմ կարող ընդդեմանալ չարին եւ չեմ կարող կատարել մէկ հատ բարի գործ : Բայց Քոյ մասնակցութեամբ եւ հովանաւորութեամբ կկատարեմ իմ ծնողաց ցանկութիւնը . կըլինիմ բարի Քրիստոնէաց եւ օգտակար որդի Հայրենեաց : Ես անուժ եւ անաքիտութեան ճանապարհով



կը հասնիմ եւ յաւիտենական կենաց , զոր իմ փրկիչը  
պատրաստել է ինձ համար ։


Ձ . Գ .


Ցանկ .

- 1 . Անձ որքան նշանա՛յուծիւն ունի ուսումնա-  
կանութիւնը եւ ինչպէս վնասակար է ծուլու-  
թիւնը : Գ . Տ . Ա .
- 2 . Տիղրան եւ Գայիանէ : Զ . Գ .
- 3 . Կարմիր ձու : Գ . Տ . Ա .
- 4 . Բարի խորհուրդներ : Ա . Ե .
- 5 . Փայտ կտրող եւ նորա կնիկը : Ս . Ե .
- 6 . Խելօք եւ բարեւիրտ Կոստանդնի մտածմունք-  
ները : Զ . Գ .

Շանթիւն . Այս գրքուկիս ի լոյս ընծա-  
յողքը խոնարհաբար խնդրում են յընթերցո-  
ղաց ներողութիւն անել սալագրութեան քանի  
մի սխալների համար :











2423

00006734

2013

